

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**34**

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**34**

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**34**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են  
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

ԲԱՆԱՎԵՃ  
DISCUSSION  
ДИСКУССИЯ

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԳԱՆՅԱՆ\*

DOI:10.57155/ADFN9519

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ,  
ԹԵ՛ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄ

*Բանալի բառեր՝ Կանոնագիրք Հայոց, կանոնախումբ, կանոնագիրք ձեռագրերի Ա խումբ, կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ, Սահմանադրական մշակույթ, գրագողություն, նարինե Միրզոյան:*

2020 թ. հրատարակվեց և 2021 թ. գիտական հանրությունը ներկայացվեց «Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» (այսուհետ՝ ՄՄ) ուսումնասիրությունների ժողովածուն<sup>1</sup>, որում ներկայացված է հայ իրավական և սահմանադրական մտքի առաջացման և զարգացման պատմությունը Ք.ա. Գ. հազարամյակից մինչև մեր ժամանակները: Այստեղ մեկտեղված են հիմնականում ոլորտի մասնագետների ուսումնասիրությունների արդյունքները:

Դեռևս անհիշելի ժամանակներից մարդիկ օրենքներ են սահմանել հասարակության ներդաշնակ համակեցությունն ապահովելու, հասարակական փոխհարաբերությունների տարբեր ոլորտները կարգավորելու, տվյալ ժամանակի չափանիշներով այս կամ այն արատավոր երևույթը, հանցանքը կամ զանցանքը կանխարգելելու համար: Դատապարտելի այդ արարքների մեջ կան այնպիսիք, որոնց մշտապես անդրադարձել են բոլոր ժամանակների օրենսդիրները և զանազան օրենսդրական կարգավորումներով, պատժամիջոցների կիրառմամբ փորձել կանխակայել դրանց տարածումը: Նման հանցանքներից է գողությունն

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք.գ.ք., nvardanyan7@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ սեպտեմբերի 23, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 10, 2022:

<sup>1</sup> Ա. Բոզոյան, Ա. Եղիազարյան, Գ. Թանանյան, Ա. Հակոբյան, Գ. Հարությունյան, Հ. Մարության, Ն. Միրզոյան, Ա. Մովսիսյան, Ա. Վաղարշյան, Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում, Ս. Էջմիածին, 2020, 944+40 էջ:

առհասարակ, իսկ այս դեպքում գրագողությունը մասնավորաբար: Գողության այս տեսակի հանդեպ հստակ և խիստ պատժամիջոցների բացակայությունն է թերևս վերջին շրջանում դրա լայն կիրառման ու տարածման պատճառը: Անպատժելիությունը, ճնշման հստակ միջոցների բացակայությունը խթանում է գրագողության աճը:

Գրագողության, ավելին՝ անգրագետ, անբարեխիղճ գրագողության ցայտուն օրինակ է «ՍՄ» ժողովածուում պ.գ.թ., դոցենտ Նարինե Միրզոյանի «կազմած» «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբագրության սկզբնավորումը, աճընթացն ու հետագա խմբագրությունները» բաժինը (էջ 205-227), որի քննությունն էլ նվիրված է սույն հոդվածը<sup>2</sup> (Ն. Միրզոյանի «հեղինակած» մյուս երեք բաժիններին<sup>3</sup> անդրադարձել ենք միայն առանձին դեպքերում): Ժողովածուի վերոնշյալ բաժինն ամբողջովին հակազիտական մի շարադրանք է, որի հեղինակը ոչ միայն յուրացրել է մինչ այս հայերեն կանոնական ժողովածուները և բնագրերն ուսումնասիրած հեղինակների տեսակետները, այլև, նյութին ամբողջապես շիմանալու և աղբյուրների հանդեպ անփույթ վերաբերմունքի պատճառով, խեղաթյուրել է դրանք, երբեմն իր թյուրընկալումները և հակազիտական եզրակացությունները վերագրել Վ. Հակոբյանին, Ա. Բոզոյանին<sup>4</sup>, Ն. Ակինյանին և այլոց: Հիմնականում օգտվելով պ.գ.թ. Ն. Վարդանյանի ուսումնասիրություններից՝ Ն. Միրզոյանն առանց որևէ հղման «սեփականացրել» է վերջինիս կարծիքներն ու կարևոր եզրահանգումները և առանց խորշելու գործածել «կարծում ենք», «եզրակացնում ենք» արտահայտությունները, մասամբ կամ ամբողջովին յուրացրել է նաև Վ. Հակոբյանի, Ռ. Վարդանյանի տեսակետները: Զպահպանելով գիտական հղման սկզբունքները՝ Ն. Միրզոյանը, հաճախ հղել է ոչ այն հեղինակների աշխատանքներին, որոնցից օգտվել է, այլ դրանց սկզբնաղբյուրներին՝ տպավորություն ստեղծելով, թե ծանոթ է և օգտագործել է նաև տվյալ աղբյուրները: Հակազիտական այս մոտեցման շնորհիվ էլ սույն և Ն. Միրզոյանի

<sup>2</sup> Պարզաբանենք, որ սույն հոդվածը գրել ենք երկար մտորումներից հետո: Ի վերջո, ի շահ ընթերցողի և հանուն գիտական նշմարտության որոշեցինք մանրակրկիտ ներկայացնել խեղաթյուրված կարևորագույն փաստերը, որպեսզի ուսումնասիրողները մանրամասն տեղեկացված լինեն «ՍՄ» ժողովածուի վերոնշյալ բաժնի հակազիտական «եզրակացություններին» և իրենց աշխատանքներում չօգտագործեն դրանք: Լիահույս ենք նաև, որ, կատարված հակազիտական ֆայլին վերաբերող այս անդրադարձով, մեր փոփոխ լուսն կներդնենք գրագողության կանխարգելման գործում:

<sup>3</sup> ՍՄ, «Բովանդակություն», էջ 9-11:

<sup>4</sup> Սույն ժողովածուի Դ. բաժնում՝ «Դ-ե դարերի հայ կանոնական իրավունքի դրսևորումներ: Սահակ Պարթևը՝ հայոց կանոնագիտության հիմնադիր», խոսելով Կեսարիայի ժողովի կանոնախմբի մասին, նիշտ շքնկալելով այս կանոնախմբին առնչվող՝ Ա. Բոզոյանի անդրադարձը, վերջինիս է վերագրում Հ. Կառնիկոյի տեսակետը (տե՛ս ՍՄ, էջ 143, ծնթ. 37, հմմտ. Ա. Բոզոյան, «Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձաններ», էջմիածին, 2006, Յուլիս-Օգոստոս, էջ 92, ծնթ. 2):

կազմած մյուս բաժիններում, որոնց, ինչպես արդեն նշեցինք, կանդրադառնանք միայն առանձին դեպքերում, բազմաթիվ են թերի, կեղծ, երբեմն էլ անհեթեթ հղումները. օր.<sup>5</sup> Ն. Միրզոյանը վկայակոչում է Մաշտոցյան Մատենադարանում և այլ ձեռագրապահոցներում պահվող գրչագրեր, որոնք երբևէ չի ուսումնասիրել, ավելին՝ առկա են նաև հղումներ գոյություն չունեցող կամ կորուսյալ ձեռագրերին: Այս ամենը համապատասխան օրինակներով կներկայացնենք ստորև:

\*\*\*

Ն. Միրզոյանի՝ կանոնագիտության վերաբերյալ մակերեսային, հպանցիկ, ոչ լիարժեք գիտելիքների վառ ապացույց է քննարկվող բաժնի վերնագիրն իսկ՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի **Բ խմբագրության** (այս և հետագա ընդգծումները մերն են – Ն. Վ.) սկզբնավորումը, աճընթացն ու հետագա խմբագրությունները» (ՄՄ, էջ 10, նաև 205): Փաստորեն, դատելով սույն վերնագրից և այս բաժնի մյուս ենթավերնագրերից (որոնցից միայն վերջինի բովանդակությունն է առնչվում բուն խորագրին<sup>5</sup> (տե՛ս ՄՄ, էջ 10)) հեղինակը տեղյակ չէ, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Ա և Բ խմբագրություն<sup>6</sup> հասկացություն առհասարակ գոյություն չունի, և մասնագիտական գրականության մեջ հիմնականում գործածվում են Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբեր պայմանական անվանումները, որ սահմանել է Վ. Հակոբյանը<sup>7</sup>: Եթե Ն. Միրզոյանն ուսումնասի-

<sup>5</sup> Թեև սույն բաժինն, ըստ խորագրի, նվիրված է «Բ խմբագրության (իմա՝ ձեռագրերի Բ խումբ)» ձևավորման և հետագա զարգացման պատմությանը, սակայն Ն. Միրզոյանը Նախաբանում և առաջին գլխի 4 ենթաբաժիններում «ներկայացրել է» նաև Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբն ու դրա խմբագրությունները: Իհարկե, ինչպես կտեսնենք ստորև, Բ. դարակեսից հետո «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը, Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի ձևավորման փուլային բաժանումները, որ արտացոլված են նաև ենթաբաժինների վերնագրերում, ամբողջովին «վերցված» են Ն. Վարդանյանի Ատենախոսությունից և տպագիր հոդվածներից:

<sup>6</sup> Ժողովածուի թե՛ այս, թե՛ Գ. բաժնում՝ «Գ-ե դարերի հայ կանոնական իրավունքի դրսևորումները: Սահակ Պարբեր՝ հայոց կանոնագիտության հիմնադիր» Ն. Միրզոյանը բազմիցս գործածում է այս սխալ ձևակերպումները (տե՛ս ՄՄ, էջ 133, ծնթ. 12, էջ 139, ծնթ. 24, էջ 144, 149, 151, 154, 205, 207, 210, 212-214, 216, 218-219, 221-222, 224):

<sup>7</sup> «Այսպիսով, Կանոնագրի համահավաք բնագիրը կազմելիս օգտագործել ենք 48 ձեռագիր: Այս ձեռագրերում կանոնախմբերը տարբեր հաջորդականություն և դասակարգում ունեն: Նկատի ունենալով այդ հանգամանքը, նշված ձեռագրերը բաժանում ենք երկու խմբի. Ա խումբ... Բ խումբ» (Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, հ. Ա, «Ներածություն», Երևան, 1964, էջ XXX): Այս խմբերի և դրանց ենթախմբերի առաջացման, հետագա զարգացման, դրանց նմանությունների ու տարբերությունների մասին Վ. Հակոբյանը խոսում է իր աշխատության ներածական մասերում. տե՛ս նույն տեղում, էջ XXX-XLIV, նաև Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, հ. Բ, «Ներածություն», Երևան, 1971, էջ VII-XLI, XLII:



րած կամ թեկուզ ուշագիր կարդացած լիներ Վ. Հակոբյանի մեծարժեք աշխատությունը, միգուցե իր համար պարզաբանած լիներ այս հարցը: Սակայն, նա, ընդհակառակը, անգամ Վ. Հակոբյանին է վերագրում «Ա և Բ խմբագրություն» ձևակերպումները. «Վ. Հակոբյանը, խոսելով «Կանոնագիրք Հայոց»-ի Ա խմբագրության կանոնախմբերի իրավական ընդգրկման մասին, նկատում է. «Կանոնագրքի հոդվածները զգալի չափով վերաբերում են դավանանքի և պաշտամունքի ծիսական խնդիրներին... նյութական պատիժներ չեն նախատեսում» (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ XI)» (ՄՄ, էջ 133, ծնթ. 12) կամ «Այսու՛ Վ. Հակոբյանը «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբագրության 66-78 կանոնախմբերի հեղինակ է համարում Գևորգ Երզնկացուն» (ՄՄ, էջ 222):

Ընդգծենք, որ առաջին օրինակի՝ «Կանոնագիրք Հայոց» աշխատասիրությունից մեջբերված հատվածում և դրան հաջորդող շարադրանքում Վ. Հակոբյանը խոսում է առհասարակ Կանոնագրքի մասին՝ շառանձնացնելով ձեռագրական որևէ խումբ կամ որևէ խմբագրություն<sup>8</sup>: Ավելին, իր աշխատության մեջ, անդրադառնալով «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն ներկայացնող ձեռագրախմբերին և դրանց ենթախմբերի նմանություններին ու տարբերություններին, դրանց առաջացմանն ու հետագա խմբագրություններին (այդ թվում նաև երկրորդ օրինակում), Վ. Հակոբյանն առհասարակ չի գործածում «Կանոնագիրք Հայոց»-ի Ա կամ Բ խմբագրություն բնորոշումները<sup>9</sup>:

Մինչդեռ ն. Միրզոյանը հետագա շարադրանքում վստահաբար պնդում է, որ այդ ձևակերպումները կիրառվում և ծանոթ են հայագիտության մեջ. «Վերոնշյալ կանոնախմբերի (իմա՝ ԽԱ...) վերախմբագրման արդյունքում կազմավորվել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեկ այլ տարբերակ՝ հայագիտության մեջ հայտնի Բ խմբագրությունը» (ՄՄ, էջ 212) կամ «Կանոնագիրք ժողովածուի

---

Հավելեմ, որ Կանոնագիրք ձեռագրերն առանձին խմբերի առաջին բաժանել է Ս. Տիգրանյանը (տե՛ս Ս. **Тигранян**, *Древне-армянская книга канонов, Очерки описания и исследования памятника, I Описательная часть*, Записки Российской академии наук по историко-филологическому отделению, Том XIII, N 3, Петроград, 1918, с. 45-159): Ըստ Ս. Տիգրանյանի բաժանումների վերոնշյալ ձեռագրախմբերը կրում են В և А պայմանական անվանումներ: Կանոնագիրք ձեռագրերի խմբավորումներ է կատարել նաև ն. Ակիմյանը (տե՛ս ն. **Ակիմեան**, *Թողթ Մակարայ Բ. Երուսաղեմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսպետ Մինեաց Յաղագս կարգաց եկեղեցոյ, Վիեննա, 1930 թ., էջ 103-107*): ն. Ակիմյանի գատորոշած Ա և Բ խմբերը համապատասխանում են Վ. Հակոբյանի իրականացրած խմբային նույնանուն բաժանումներին: Ս. Տիգրանյանի և Վ. Հակոբյանի ձեռագրական բաժանումների հիման վրա խմբային և ենթախմբային նոր վերաբաժանումներ է իրականացրել նաև Ա. Հակոբյանը (տե՛ս Ա. **Հակոբյան**, «Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հեղինակային նախօրինակը և հետագա խմբագրությունները», ՄՄ, էջ 200):

<sup>7</sup> Վ. **Հակոբյան**, *Կանոնագիրք Հայոց*, հ. Ա, «Ներածություն», էջ XI-XII:

<sup>9</sup> Վ. **Հակոբյան**, *Կանոնագիրք Հայոց*, հ. Ա, «Ներածություն», էջ XXX-XLIV, հ. Բ, «Ներածություն», էջ VII-XLI, XLII:

Ա-և (1-40) կանոնախմբերի վերախմբագրման արդյունքում կազմավորվել է հայագիտության մեջ հայտնի Բ խմբագրությունը» (ՍՄ, էջ 216)<sup>10</sup>:

Իհարկե, հետագա շարադրանքում՝ գլխավորապես Վ. Հակոբյանի ուսումնասիրությունից մեջբերված կամ Ն. Միրզոյանի աշխատանքներից «փոխառված» հատվածներում, Ն. Միրզոյանը գործածում է նաև ձեռագրերի Ա և Բ խումբ եզրերը (տե՛ս ՍՄ, էջ 210, 212, 213, 216 և այլուր)՝ չհատակեցնելով, վերջիվերջո, իր կարծիքով Ա և Բ խմբագրությունն է, թե՛ ձեռագրերի Ա և Բ խումբ: Հաճախ, նույնիսկ նույն նախադասության կամ պարբերության մեջ, նույն էջին զուգահեռ գործածում է երկու տարբերակն<sup>11</sup> էլ (տե՛ս ՍՄ, էջ 212, 214, 216, 218, 219, 221, 224 և այլուր)<sup>12</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, Ն. Միրզոյանի՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի զարգացման պատմությանը (Ը. դարակեսից ժէ. դար), Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի ձևավորման փուլային բաժանումներին վերաբերող հիմնական «եզրահանգումները», «գիտական նորույթներն» առանց որևէ հղման ամբողջովին «վերցված» են Ն. Վարդանյանի Ատենախոսությունից և տպագիր հոդվածներից:

«Հեղինակի» շարադրանքն առաջին իսկ տողերից աչքի է ընկնում գրագողության ակնհայտ օրինակներով: Ն. Միրզոյանը ոչ միայն «յուրացրել» է թեմայի վերաբերյալ Ն. Վարդանյանի հիմնական եզրահանգումներն, այլև ուղղակի մեծ և փոքր հատվածներ արտագրել նրա ուսումնասիրություններից՝ կատարելով աննշան փոփոխություններ: Այսպես՝

<sup>10</sup> Հարկ է նշել, որ սույն նախադասությունները, սխալ ձևակերպումները չհաշված, գրագողության հերթական նմուշներից են: Այստեղ արտահայտված միտքը ևս Ն. Միրզոյանը «փոխառել է» Ն. Վարդանյանի աշխատանքներից. «1056-1059 թթ. Հովհաննես Օձնեցու կազմած և հետագայում ընդարձակված «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ԽԱ (41) կանոնախմբերի վերախմբագրման և վերադասավորման արդյունքում ստեղծվում է ժողովածուի մի նոր տարբերակը (Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ)» (Ն. Վարդանյան, «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի կազմավորումը և զարգացման պատմությունը, Ատենախոսություն, 2015, էջ 52, (անտիպ), այսուհետ՝ Ատենախոսություն), նաև «1056-1059 թթ. միջակայքում այդ 41 կանոնախմբերի հիման վրա առաջանում է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեկ այլ տարբերակը՝ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական օրինակը» (Ն. Վարդանյան, «Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի ընդլայնումը IX դ. վերջ – XVII դդ.», Թե՛ Հայագիտություն, Երևան, 2016, 2, էջ 37 (այսուհետ՝ «Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբ. IX- XVII դդ.»):

<sup>11</sup> Այս շփոթը և բյուրմբնումը նկատելի է նաև սույն բաժնի ենթավերնագրերում (տե՛ս ՍՄ, «Բովանդակություն», էջ 10):

<sup>12</sup> Սահմանումների սխալ և տարածն կիրառության օրինակ են նաև Կանոնագիրք ձեռագիր հասկացության տարբերույթ գործածությունները. Կանոնագիրք ձեռագիր-կանոնագիր ձեռագիր-Կանոնագրի ձեռագրեր-կանոնագիրք-ձեռագիր (ՍՄ, էջ 209, 210, 211, 212, 213, 214, 216, 218, 222, 224): Հաճախ նույն էջին կիրառում է միանգամից մի քանի տարբերակն էլ:

Ն. Վարդանյան	Ն. Միրզոյան
<p>«Պատմական վկայությունների, ձեռագրական վաղ տվյալների բացահայտությամբ պայմանավորված այսօր դժվար է ցույց տալ, թե այդ լրացումները երբ և ում կողմից են կատարվել, կամ հերթական կանոնախումբը առանձին, թե՞ մի քանի այլ կանոնախմբերի հետ է ընդգրկվել ժողովածուի մեջ: Ի. դարում Ս. Տիգրանյանը, Ն. Ակինյանը եւ Վ. Հակոբյանը, հիմնվելով պահպանված մատենագրական վկայությունների վրա, իրենց աշխատություններում փորձել են հնարավորին չափ պատասխանել այս հարցերին՝ թվագրելով կանոնական այս կամ այն շերտի ավելացման ժամանակը»<sup>13</sup>:</p>	<p>«Մատենագրական տեղեկությունների և պատմական վկայությունների բացահայտությունը հնարավորություն չեն ընձեռում հստակեցնելու ժողովածուի մեջ ավելացված կանոնախմբերի ում կողմից և երբ ընդգրկված լինելու հանգամանքը, ինչն ավելի խրթին է դարձրել խնդրո առարկա հարցերի լուսաբանումը: ... վերոհիշյալ խնդրահարույց հարցերին Ի դարասկզբից անդրադարձել են որոշ ուսումնասիրողներ (Հ. Գաթրճյան, Հ. Տաշյան, Աբել արք. Մխիթարյան, Ն. արք Մելիք Թանգյան, Ա. Ղլտճյան, Ն. Ակինյան, Ս. Տիգրանյան, Վ. Հակոբյան, Լ. Խաչերյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Հակոբյան), ովքեր փորձել են համակողմանի քննել կանոնական այս կամ այն շերտի ավելացման ժամանակը» (ՄՄ, էջ 207-208):</p>

Այս դեպքում գրագողությունը քողարկելու նպատակով Ն. Միրզոյանը երկրորդ նախադասության մեջ Ն. Վարդանյանի նշած 3 ուսումնասիրողների կողքին ավելացրել է նաև այլ հեղինակների անուններ՝ թույլ տալով հետևյալ կոպիտ սխալները.

Նախ՝ երբ Ն. Միրզոյանը գրում է. «վերոհիշյալ խնդրահարույց հարցերին Ի դարասկզբից անդրադարձել են որոշ ուսումնասիրողներ», անտեսում է մի կարևորագույն փաստ, որ իր նշած ուսումնասիրողներից մի քանիսը ստեղծագործել և իրենց աշխատանքները տպագրել են ժԹ. դարում, ինչպես օրինակ՝ Հ. Գաթրճյանը, ով մահացել է 1882 թ., կամ Հ. Տաշյանը, Ա. Մխիթարյանը, որոնց՝ Ն. Միրզոյանի վկայակոչած երկերը (ՄՄ, էջ 208, ծնթ. 2) տպագրվել են 1896 և 1874 թթ.:

<sup>13</sup> Ն. Վարդանյան, « «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի խմբագրությունները (Ը. դարի երկրորդ կես – ժԱ. դարի երկրորդ կես)», *Էջմիածին*, 2016 թ., Ե. (մայիս), էջ 54-55 (այսուհետ՝ «Կանոնագիրք Հայոց». Ը.-ժԱ. դդ.), նաև՝ *Ատենախոսություն*, էջ 46-47:

Երկրորդ՝ նշված հեղինակների մի մասն առհասարակ չի անդրադարձել այս կամ այն կանոնական շերտի ավելացման խնդիրներին, նրանք քննել են միայն առանձին կանոնախմբերի վավերականության հարցը, հրատարակել դրանց բնագրերը: Իսկ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի առաջացման և հետագա ընդլայնման, Կանոնագիրք ձեռագրերի խմբային դասդասման հարցերին Ի. դարում առաջինն անդրադարձել է Ս. Տիգրանյանը, և ապա Ի.-ԻԱ. դարերի հաջորդ ուսումնասիրողները:

Եւ երրորդ՝ անհասկանալի է այս ցանկում Լ. Խաչերյանի անվան հիշատակումը, ով ընդամենը 1972 թ. գրախոսել է Վ. Հակոբյանի «Կանոնագիրք Հայոց» աշխատությունը: Հեղինակի այս գործն էլ ն. Միրզոյանը հղել է տողատակում (ՄՄ, էջ 208, ծնթ. 2) տպավորություն ստեղծելով, թե Լ. Խաչերյանը ևս անդրադարձել է Կանոնագրքին առնչվող «խնդրահարուց հարցերին»:

Հատկանշական է, որ ն. Վարդանյանի աշխատանքներից կատարված «յուրացումները», ակնհայտ արտագրությունները քողարկելու համար ն. Միրզոյանը դիմում է հետևյալ հնարքին, սկզբում ներկայացնում է այս կամ այն հարցի վերաբերյալ Վ. Հակոբյանի տեսակետը, ապա շարունակում կամ զուգահեռ ներկայացնում է ն. Վարդանյանի՝ հաճախ նյութը չհասկանալու պատճառով խեղաթյուրված տեսակետները՝ երբեմն իրեն վերագրելով, երբեմն էլ տպավորություն ստեղծելով, թե արտացոլում, վերաշարադրում է Վ. Հակոբյանի կարծիքը:

Այսպես՝ 211-րդ էջում վերարտադրելով «Կանոնագիրք Հայոց»ի ընդլայնման (ԻԵ-ԼԴ-ԼԸ կանոնախմբերի սահմաններում) վերաբերյալ Վ. Հակոբյանի տեսակետը. «Հերթական ավելացված կանոնների սահմանները Վ. Հակոբյանն առանձնացնում է Անանիա Մոկացու թղթերում առկա կանոնական տվյալների հիման վրա... Ըստ ուսումնասիրողի (իմա՝ Վ. Հակոբյան) Կանոնագիրքը կարող էր եզրափակված լինել ԼԴ-ԼԸ կանոնախմբերից որևէ մեկով» (ՄՄ, էջ 211) հաջորդիվ ներկայացնում է «Կանոնագիրք Հայոց»ի ընդարձակման՝ «իր», իրականում ն. Վարդանյանի սահմանազատած ժամանակագրական փուլերը. «Առնչակից տեղեկությունների ժամանակագրության մեջ ի հայտ եկող միջարկումները թույլ են տալիս «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Ա խմբի կանոնախմբերի ընդլայնման ընթացքը ձևակերպելու հետևյալ փուլային բաժանումներով՝

ա. Ը դարակեսից մինչև ԺԱ դարակես՝ 1056-1059 թթ., Ա.-Խ (1-40) կանոնախմբերի սահմաններում,

բ. ԺԱ դարակեսից՝ 1056-1059 թվականներից հետո՝ մինչև 1098 թվականն ընկած ժամանակահատվածում ԽԱ-ԾԷ (41-57) կանոնախմբերի շրջանակում,

գ. ԺԱ դարի վերջից մինչև ԺԷ դարն ընկած ժամանակահատվածում՝ Ը (իմա՝ ԾԸ)-Կ (58-60) կանոնախմբերի եզրափակումով» (ՄՄ, էջ 211):

Առանց մասնավորեցնելու, թե որոնք են առնչակից տեղեկությունները, և

ինչի հիման վրա է ինքը նման ժամանակային բաժանումներ կատարել՝ Ն. Միրզոյանը թույլ է տալիս մի շարք սխալներ:

Այսպես՝ ներկայացնելով առաջին փուլն Ը. դարակեսից մինչև ԺԱ. դարակես՝ 1056-1059 թթ.՝ նշում է Ա.-Խ. (իմա՝ ԽԱ.) կանոնախմբերը, մոռանալով, որ Ա.-ԻԳ-ն, ինչպես նշել է նախորդ գլխում (տե՛ս ՄՄ, էջ 209-210), ընդգրկված են եղել արդեն Ը. դարի առաջին կեսին: Հետևաբար իր նշած ժամանակահատվածում ավելացվել են ԻԵ.-ԽԱ. կանոնախմբերը:

Երկրորդ՝ ԺԱ. դարի կեսերից՝ 1056-1059 թվականներից հետո՝ մինչև 1098 թվականն ընկած ժամանակային փուլը նշելիս չի մասնավորեցնում, թե որտեղից է վերցրել մինչև 1098 թ.-ի տեսակետը, քանզի ըստ Վ. Հակոբյանի 57 կանոնախմբերն ավելացվել են հենց 1098 թ. (ԿՀ, հտ. Բ. XXVI-XXVII):

Ինչպես կտեսնենք ստորև, մինչև 1098 թ. ևս Ն. Վարդանյանի առաջ քաշած տեսակետն է:

Ն. Վարդանյանի «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի զարգացման փուլային բաժանումներին վերաբերող տեսակետների Ն. Միրզոյանի «փոխառումներն» արտացոլված են նաև սույն բաժնի ենթագլուխների վերնագրերում:

Այսպես, էջ 10-ում և 211-ում, 6.1.1 ենթագլխի վերնագիրը «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձեռագրերի Ա խմբի ընդլայնումը Ը դարի կեսերից մինչև ԺԱ դարի առաջին կեսերը՝ 1056-1059 թթ.» արտագրված է Ն. Վարդանյանի Ատենախոսությունից համապատասխան գլխի վերնագրից՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հետագա ընդլայնումը VIII դարի երկրորդ կեսից մինչև XI դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում»<sup>14</sup>:

Ակներև արտագրությունը քողարկելու նպատակով Ն. Միրզոյանն ընդմիջարկություն է արել և խորագրում ավելացրել «ձեռագրերի Ա խմբի» ձևակերպումը՝ հերթական անգամ ի ցույց դնելով նյութին իր անտեղյակությունը, քանզի նշված ժամանակահատվածում Ա և Բ խմբերը դեռևս չէին տարանջատվել:

Հատկանշական է, որ Ն. Միրզոյանն այս ենթագլխի ողջ շարադրանքում գործածում է «ձեռագրերի Ա խումբ» սխալ ձևակերպումը՝ չհասկանալով, որ մինչև 1056-1059 թթ. փոփոխությունները վերաբերում են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուին ընդհանրապես, այլ ոչ ձեռագրերի Ա կամ Բ խմբին:

Ն. Վարդանյանի եզրահանգման հերթական «յուրացմանը» հանդիպում ենք 211-րդ էջում. «Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբը մինչև 1056-1059 թթ. ընդգրկել է Խ-ԽԱ (40-41) կանոնախումբ» հմմտ. Ն. Վարդանյան. «Կանոնա-

<sup>14</sup> Ն. Վարդանյան, Ատենախոսություն էջ, 2, 46, տե՛ս նաև նույնի՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի կազմավորումը և զարգացման պատմությունը, Սեղմագիր, Երևան, 2015, էջ 10, 15 (այսուհետ՝ Սեղմագիր):

գիրք Հայոց» ժողովածուն... աստիճանաբար ընդարձակվել է և արդեն ժԱ. դարի առաջին կեսին՝ մինչև 1056-1059 թթ., ընդգրկել է **ԽԱ. (41) կանոնախումբը**<sup>15</sup>: Իր գրագողությունը թաքցնելու նպատակով ն. Միրզոյանը նախադասության վերջում՝ «**Խ-ԽԱ (40-41) կանոնախումբը**» բառերից հետո հղում է վ. Հակոբյանի «Կանոնագիրք Հայոց» աշխատությանը (ՄՄ, ծնթ. 14 «Անդ (իմա՝ Կանոնագիրք Հայոց, հ. Բ), էջ 239»): Այս կերպ տպավորություն է ստեղծում, թե դա վ. Հակոբյանի տեսակետն է: Մինչդեռ ն. Միրզոյանի նշած էջին տպագրված են կանոնական բնագրերը, և ոչ վ. Հակոբյանի ուսումնասիրության արդյունքները<sup>16</sup>:

Հատկապես ուշագրավ է, որ վ. Հակոբյանը որևէ տեղ չի խոսում **ԽԱ. կանոնախմբի կամ ժԱ. դարի առաջին կեսին իրականացված խմբագրության մասին**: վ. Հակոբյանն, ընդհակառակը, կարծում է, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն ընդգրկել է **Խ. (40) կանոնախումբը արդեն ժ. դարավերջին, և այդ Խ. (40) կանոնախմբերի ժամանակագրական հաջորդականությունը վերադասավորման հետևանքով էլ ժ. դարի 90-ական թվականներին առաջացել է Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը**<sup>17</sup>:

Իսկ **ԽԱ. (41) կանոնախմբերի հիմնավորումն ու փաստարկները դեռևս 2014 թ. ներկայացրել է ն. Վարդանյանը, Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի նոր Զուղայի սբ. Ամենափրկիչ վանքի 131<sup>18</sup> (1098), ՄՄ 3148 (ժէ-ժԸ դդ.) և Բ խմբի ՄՄ 656 (1661), 646 (1731), 10311 (1637), 9513 (ժէ. դարավերջ-ժԸ. դարասկիզբ) գրագրերի մանրակրկիտ ուսումնասիրության և համեմատության շնորհիվ**<sup>19</sup>: ն. Միրզոյանը **ԽԱ. (41) կանոնախմբերի «իր» եզրահանգաման համար ն. Վարդանյանի հիմնավորումներից առանձնացրել է նոր Զուղայի 131 և ՄՄ 3148**

<sup>15</sup> **Ն. Վարդանյան**, «Կանոնագիրք Հայոց». Բ.-ժԱ. դդ., էջ 62:

<sup>16</sup> Նույնիսկ եթե ընդունենք, որ ն. Միրզոյանը **Խ-ԽԱ. կանոնախմբերի բնագրերին է հղում կատարել, ապա այս դեպքում էլ հարկ է ընդգծել, որ նա հղման մեջ պետք է նշեր ոչ թե ԽԱ. կանոնախմբի բնագրի առաջին՝ 239-րդ, այլ գոնե վերջին՝ 243-րդ էջը, որպեսզի ընթերցողին ցույց տար «Կանոնագիրք Հայոց»-ի ընդգրկման սահմանները: Իհարկե, այս դեպքում, շատ ավելի գիտական կլինեք նշել Ա.-ԽԱ. կանոնախմբերի էջերը՝ «հ. Ա, էջ 18-537, հ. Բ, էջ 3-243»: Սակայն, ինչպես վերը նշեցինք, այս հղումով ն. Միրզոյանն ընդամենը փորձել է թաքցնել գրագողության ակնհայտ փաստը:**

<sup>17</sup> **Վ. Հակոբյան**, *Կանոնագիրք Հայոց*, հ. Բ, «Ներածություն», էջ XXV:

<sup>18</sup> Նոր Զուղայի ձեռագրացուցակում գրագրի նկարագրությունը դրված է 542-րդ համարի ներքո. տե՛ս *Յուզյակ հայերէն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի*, հ. Ա, կազմ. **Ս. Տէր-Աւետիսեան**, Վիեննա, 1970, էջ 814-817:

<sup>19</sup> **Ն. Վարդանյան**, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի կազմավորումն ու հետագա խմբագրությունը 78 կանոնախմբերի սահմաններում», *ՊԲՀ*, Երևան, 2014, 3, էջ 131-132 (այսուհետ՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր»), **Ռույնի**՝ «Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», *ԲԵՀ. Հայագիտություն*, Երևան, 2015, 2, էջ 51, **Ռույնի**՝ «Կանոնագիրք Հայոց». Բ.-ժԱ. դդ., էջ 57-59, **Ռույնի**՝ *Ատենախոսություն*, էջ 49-51, 72-77:

ձեռագրերի առարկայական ցանկերին վերաբերող փաստարկը, այն էլ մասամբ, առանց համապատասխան օրինակների, և հետագա շարադրանքում հղում կատարել նշված ձեռագրերին՝ երբևէ դրանք ուսումնասիրած չլինելով հանդերձ: Ակնհայտ է, որ Ն. Միրզոյանը չի ուսումնասիրել այս ձեռագրերը, քանզի, ինչպես արդեն նշեցինք, *ԽԱ. (41)* կանոնախմբերի առկայությունը հիմնավորող փաստարկներն առհասարակ բացակայում են նրա շարադրանքում: Ն. Միրզոյանի «հիմնարար» փաստարկները սրանք են. «1098 թ. ընդօրինակված Նոր Զուղայի 131 թվահամարի գրչագրի Կանոնագրքի ցանկի համաձայն՝ կանոնագիր ձեռագրերի Ա խումբը բովանդակում է *ԽԱ (41)* կանոն: .... ՄՄ 3148 թվահամարի գրչագրի առարկայական ցանկը ևս ընդգրկում է *ԽԱ կանոնախմբերի ընդհանուր համարներ՝ բաղկացած լինելով Ծէ (57) կանոնախմբերից»* (ՄՄ, էջ 211-212):

Այն, որ Ն. Միրզոյանը ծանոթ չէ վերը նշված ձեռագրերին, վկայում են նաև հետևյալ փաստերը.

Նախ՝ Ն. Միրզոյանի «գրչագրի Կանոնագրքի ցանկ» արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ տվյալ ձեռագիրը ժողովածու է և Կանոնագրքից բացի ներառում է նաև այլ միավորներ: Մինչդեռ, սույն ձևակերպումը հուշում է, որ Ն. Միրզոյանը ոչ միայն չի տեսել Նոր Զուղայի 131 ձեռագիրը, այլ նույնիսկ չի թերթել տվյալ գրչագրի նկարագրությունը համապատասխան ձեռագրացուցակում<sup>20</sup>: Այլապես կնկատեր, որ այդ ձեռագիրը ժողովածու չէ, այլ միայն Կանոնագրքի ընդօրինակություն է և կգրեր «գրչագիր Կանոնագրքի ցանկի համաձայն»:

Երկրորդ՝ եթե Ն. Միրզոյանն ուսումնասիրած կամ առնվազն թերթած լիներ Նոր Զուղայի 131 ձեռագիրը և հատկապես առարկայական ցանկը, կիմանար, որ այն ընդգրկում է ոչ միայն *ԽԱ. (41)*, այլև *Խէ.-Ծ. (47-50)* կանոնախմբերի կանոնների ընդհանուր համարները ևս<sup>21</sup>, որ ավելացվել են հետագայում, հավանաբար, գրչի կողմից:

Եվ երրորդ՝ Նոր Զուղայի 131 և ՄՄ 3148 ձեռագրերին բազմիցս հղում անող և այդ ձեռագրերը երբևէ չտեսած «հեղինակը», խախտելով ընդունված գիտական կարգը, նմուշի համար գեթ մեկ թերթ չի նշում այդ ձեռագրերից: Ասենք օրինակ, թե ո՞ր թերթերին են գտնվում ձեռագրերի առարկայական ցանկերը, կամ առարկայական ցանկի ո՞ր խորագրի ներքո է գտնվում *ԽԱ. կանոնախմբի ընդհանուր համարը* և, առհասարակ, ո՞րն է այդ կարևոր համարը: Միայն 212-

<sup>20</sup> Յուզակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, էջ 814-817:

<sup>21</sup> Նոր Զուղա 131 (ՄՄ Գրսի լուսանկարների հավաքածու <sup>2</sup>մ. 203), 7ա-17բ (ըստ լուսանկարչական պատճենի):

րդ էջում բավարարվում է հետևյալ ոչ գիտական հղմամբ. «ԽԱ. Կանոն Յովհաննու Մանդակունույ. Գլուխ Ա՛ ըստ նոր Զուղա 131 թվահամարի և ՄՄ 3148 գրչագրերի» (ՄՄ, էջ 212, ծնթ. 17): Անհասկանալի այս հղման մեջ ձեռագրերի համապատասխան թերթահամարների բացակայությունը, խորագրի սխալ ձևակերպումը<sup>22</sup> և ապացուցում են, որ Ն. Միրզոյանը տվյալ ձեռագրերը չի հետազոտել: Նա նույնիսկ չի կարող արդարանալ, թե նոր Զուղայի 131 ձեռագրի պարագայում օգտվել է Վ. Հակոբյանի կազմած բնագրից (անկասկած սա ևս հակագիտական մոտեցում է, երբ օգտվում ես մի աղբյուրից և հղում հիմք աղբյուրը), քանզի Վ. Հակոբյանը հրատարակել է այս ձեռագրի առարկայական ցանկը վերը նշված հետագա հավելումներով<sup>23</sup> և միայն ձեռագիր տարբերակն ուսումնասիրելով է հնարավոր պարզել, թե որոնք են այդ հավելումները: Իսկ ՄՄ 3148 գրչագրի դեպքում, բացի ձեռագիրն անմիջապես ուսումնասիրելուց, այլ տարբերակով չէր էլ կարող ծանոթ լինել դրա առարկայական ցանկին:

Ավելին՝ ընդգծենք, որ Ն. Միրզոյանն ինչպես այս, այնպես էլ իր շարադրանքի այլ հատվածներում հիշատակված՝ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերը չի ուսումնասիրել<sup>24</sup>: Իր մատնանշած գրեթե բոլոր ձեռագրերի դեպքում գործում է մեկ օրինաչափություն. ձեռագրերը վկայակոչված են առանց համապատասխան թերթահամարների նշման: Բացառություն է կազմում «Սահմանադրական մշակույթի տարրերը ԺԱ-ԺԳ. դարերի պատմաքաղաքական հոլովույթում» ենթագլխի 239-րդ էջի ծնթ. 24-ը. «Տե՛ս ՄՄ 8481 ձեռ., թ. 205բ»: Սակայն այս դեպքում ևս, ինչպես ցույց տվեցին համեմատությունները, Ն. Միրզոյանը օգտվել է սպագիր աղբյուրից և հղում կատարել սկզբնաղբյուրին:

Այսպես՝ խոսելով ԺԳ. դարում տեղի ունեցած պատմական իրադարձությունների մասին, գրում է. «Այս մասին մի փոքր տեղեկություն է պահպանվել նաև Ստեփանոս կաթողիկոսի տարեգրության (ԺԳ դար) մեջ...» (ՄՄ, էջ 239) և մեջբերում Ստեփանոս եպիսկոպոսի, ավելի ստույգ Ստեփանոս Օրբելյանի (1250-1303 թթ.) եզակի օրինակով ՄՄ 8481 ձեռագրում պահպանված ժամանակագրությունից մի հատված (տե՛ս ՄՄ, էջ 239): Այս մեջբերումը և համապատասխան հղումը տարօրինակ չէին լինի, եթե սույն ժամանակագրությունը եր-

<sup>22</sup> Վերոնշյալ ձեռագրերում կանոնախմբի խորագիրն է. «Յովհաննու Մանդակունույ Հայոց կաթողիկոսի եւ քարգմանչի աշակերտ եղելոյ սրբոյն Սահակայ Մեծի հայրապետի Հայոց կաթողիկոսի Բան կանոնական. Գլուխ Ա.» (Նոր Զուղա 131 (ՄՄ Գրսի լուսանկարների հավաքածու՝ չմ. 203), 293ա, ՄՄ 3148, 170ա):

<sup>23</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 5-17:

<sup>24</sup> Որպես Մատենադարանի աշխատակից հնարավորություն ստացանք ճշտելու, որ Ն. Միրզոյանն, ըստ ՄՄ սպասարկման մատյանների տվյալների, սույն ժողովածուում իր նշած ձեռագրերից որևէ մեկը չի պատվիրել: Վերջին ձեռագիրը, որ նա պատվիրել է 2014 թ. ՄՄ 1573 (1413 թ.) գրչագիրն է, սակայն այն իր շարադրանքում վկայակոչված չէ:



կիցս տպագրված չլիներ. 1942 թ. Աշ. Աբրահամյանի և 1951 թ. Վ. Հակոբյանի աշխատասիրությունը<sup>25</sup>:

Այս երկու տպագիր օրինակների համեմատությունից էլ պարզվեց, որ Ն. Միրզոյանն օգտվել է բնագրի՝ Վ. Հակոբյանի կազմած տարբերակից և հղել սկզբնաղբյուրին՝ ՄՄ 8481 ձեռագրին, առանց գրչագիրն օգտագործելու: Ն. Միրզոյանի «Ստեփանոս եպիսկոպոսի տարեգրության (ԺԳ դար)» (անհասկանալիորեն Ստեփաննոսն այստեղ կաթողիկոս է կոչվում) արտահայտությունը ևս հուշում է, որ նա օգտվել է Վ. Հակոբյանի կազմած բնագրից՝ օգտագործելով բնագրի՝ Վ. Հակոբյանի ձեռագրի պատճառով խորագիրը. «Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրությունը (XIII դ.)»: Ընդգծենք, որ ձեռագրում բնագիրը որևէ վերնագիր չունի, և Ն. Միրզոյանն անգամ տեղյակ չէ, որ սույն բնագիրը «Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի» խորագրով առաջինը հրատարակել է Աշ. Աբրահամյանը, ինչից հետո մի քանի տասնամյակ տևող գիտական բուռն քննարկումներ են սկսվել Ժամանակագրության՝ Ստեփանոս Օրբելյանի հեղինակության հարցի շուրջ<sup>26</sup>:

Ինչևէ, վերադառնալով «Կանոնագիրը Հայոց» ժողովածուի ԺԱ. դարի կեսերին ԽԱ. (41) կանոնախումբ ընդգրկելու «տեսակետին», նշենք, որ Ն. Միրզոյանը, իբրև թե հիմնավորելով, որ Նոր Զուղայի 131 և ՄՄ 3148 ձեռագրերի

<sup>25</sup> Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի, հրատ. պատրաստեց՝ Աշ. Աբրահամյանը, Երևան, 1942, Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրությունը (XIII դ.), Մանր ժամանակագրություններ XIII-XVII դդ., հ. I, կազմ.՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 32-64:

<sup>26</sup> 1949 թ. Լ. Խաչիկյանն ու Վ. Հակոբյանը Աշ. Աբրահամյանի հատարակված բնագրին նվիրված գրախոսականում հերժում են խնդրո առարկա ժամանակագրության Ստեփանոս Օրբելյանի գրչին պատկանելու փաստը (տե՛ս Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, «Ինչպես չպետք է հատարակվեն պատմական սկզբնաղբյուրները. (Պրոֆ. Աշ. Աբրահամյանի կողմից Ստեփաննոս Օրբելյանի անվամբ հրատարակված «Ժամանակագրության» առնչությամբ)», ՀՄՍԻ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1949, 2, էջ 77-87), որից հետո էլ 1951 թ. Վ. Հակոբյանը «Մանր ժամանակագրություններ»-ի առաջին հատորում հատարակում է այդ բնագիրը «Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրությունը» վերնագրով: 1957 թ.-ին Ն. Ակիմյանը «Մանր ժամանակագրություններ» երկհատորյակին նվիրված իր գրախոսականում, բարձր գնահատելով կատարված աշխատանքը, վերահաստատում է դեռևս 1921 թ. հայտնած իր տեսակետն առ այն, որ ժամանակագրության հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է (տե՛ս Ն. Ակիմյան, «Գրախոսական. Մանր ժամանակագրություններ ԺԳ-ԺԸ դդ.», ՀԱ, Վիեննա, 1957, 8-10, սրմ. 504-505): 1971 թ. էդ. Բաղդասարյանը, անդրադառնալով այս վիճարարյց խնդրին, հիմնավորում է, որ ժամանակագրության հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է (տե՛ս Է. Բաղդասարյան, «13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին», ՊԲՀ, Երևան, 1971, 2, էջ 210-216): 2014 թ. Վ. Մաթևոսյանը «Սամուել Անեցի և շարունակողներ» գրքի նախաբանում ի լրումն է. Բաղդասարյանի հիմնավորումների, նոր փաստերի հիման վրա հաստատում է, որ ժամանակագրության հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է (տե՛ս, Սամուել Անեցի և շարունակողներ. Ժամանակագրություն Ադամից մինչև 1776 թ., աղյու. 4. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 44-50):

առարկայական ցանկերը ներառել են *ԽԱ*. կանոնախմբերի ընդհանուր համարները, հետագա շարադրանքում շարունակում է գործածել *Խ.-ԽԱ*. (40-41) կանոնախումբ անորոշ ձևակերպումը (տե՛ս *ՄՄ*, էջ 212, 218), մինչդեռ, հիմնավորումից հետո պետք է հստակ նշեր *ԽԱ*. (41) կանոնախումբ: Ավելին, որոշ դեպքերում, երբեմն մոռանալով, որ ինքը մի քանի էջ առաջ պնդում էր, որ ժողովածուն ներառել է *ԽԱ*. կանոնախումբ, ուղղակի գրում է *Խ*. կանոնախումբ (տե՛ս *ՄՄ*, էջ 216-217, 224):

Այս խառնաշփոթի պատճառը մեկն է, ն. Միրզոյանն, ամբողջովին չուրացնելով Վ. Հակոբյանի և Ն. Վարդանյանի տեսակետները, դրանց խորքային տարբերությունները, գրագողությունը քողարկելու նպատակով միախառնում է այդ, երբեմն իրարամերժ տեսակետները, խճճում թե՛ ընթերցողին, թե՛ իրեն, և հետագա շարադրանքում էլ մոռանում, թե այդ տեսակետներից որը երբ կամ ինչպես է գործածել:

Մեխանիկական պատճենման («copy-paste») պատճառով ն. Միրզոյանը ոչ միայն չի հասկացել Ն. Վարդանյանի առաջադրած դրույթները, այլև սխալ է ընկալել կամ ներկայացրել Վ. Հակոբյանի տեսակետներն անգամ: Այսպես, 212-րդ էջում խոսելով Նոր Զուղայի 131 ձեռագրի մասին, նշում է. «Ըստ Վ. Հակոբյանի՝ Նոր Զուղայի թիվ 131 գրչագրի առարկայական ցանկը թերի է և պարունակում է Ծէ (57) կանոնախումբ» (*ՄՄ*, էջ 212, ծնթ. 15): Իհարկե, ինչպես «հեղինակի» բոլոր «գերճշգրիտ հղումների» դեպքում, այստեղ ևս ազբյուրի համապատասխան էջի նշումը բացակայում է: Եթե ն. Միրզոյանը լիովին ընկալած լիներ նյութը, ապա կիմանար, որ եթե Նոր Զուղայի 131 գրչագրի առարկայական ցանկը պարունակում է Ծէ.(57) կանոնախումբ, ապա այս դեպքում այն թերի չէ, այլ ամբողջական է, քանզի Նոր Զուղայի 131 և սրան հարող ձեռագրերն ընդգրկում են Ծէ.(57) կանոնախումբ: Մինչդեռ իրականում սույն ձեռագրի ցանկն ուղղակի արտացոլում է մինչև 1056-1059 թթ. իրականացված խմբագրության պատկերը՝ *ԽԱ*. (41) կանոնախմբերով: Եվ Վ. Հակոբյանն էլ այդ մասին նշում է. «Ա խմբի հնագույն *A* ձեռագիրը (իմա՝ Նոր Զուղա 131) բաղկացած է 57 կանոնախմբերից՝ բաժանված 1332 կանոնների, սակայն ձեռագրի սկզբում գրված առարկայական ցանկում արտահայտված են 40 (իմա՝ 41) կանոնախմբերի 1257 (իմա՝ 1258) կանոնները»<sup>27</sup>:

Վերը նշված տեսակետների «յուրացումը», ինչպես նաև թյուրընկալումն առավել ակնբեր է այս ենթագլխի եզրափակիչ նախադասության մեջ. «Միով բանիմ Ը դարի կեսից մինչև ՓԱ դարի առաջին կեսերը՝ 1056-1059 թթ., Հով-

<sup>27</sup> Վ. Հակոբյան, *Կանոնագիրք Հայոց*, հ. Բ, «Ներածություն», էջ XXII, տե՛ս նաև էջ XXVI-XXVII:

հաննես Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն **ձեռագրերի Ա խմբում** պարբերաբար ընդլայնվել, զարգացել, սրբագրվել և խմբագրվել է, սակայն միմյանցից անկախ տարբեր ուղղութիւններով: Այն ընդգրկել է *Խ-ԽԱ* (40-41) կանոնախումբ...» (ՄՄ, էջ 212):

Անդրադառնալով այս եզրահանգմանը՝ ընդգծենք.

Նախ՝ մինչև 1056-1059 թթ. «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Ա և Բ խմբերը տարանջատված չէին, քանզի Բ խումբն առաջացել է 1056-1059 թթ. քառամյակում:

Երկրորդ՝ Ն. Միրզոյանի նշած ժամանակահատվածում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի սրբագրման վերաբերյալ որևէ տեղեկություն չունենք:

Եվ երրորդ ու գլխավոր սխալը՝ մինչև 1056-1059 թթ. ժողովածուն չի զարգացել տարբեր ուղղութիւններով: Պահպանված սուղ տվյալները փաստում են միայն, որ Ը. դարի կեսերից մինչև ԺԱ. դարի կեսերը՝ 1056-1059 թթ., Հովհ. Օձնեցու մեկտեղած ԻԳ. (24) կանոնախմբերին պարբերաբար ավելացվել են նորերը, և 1056-1059 թթ. «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն ընդգրկել է *ԽԱ*. (41) կանոնախումբ: Իսկ ժողովածուի տարբեր ուղղութիւններով զարգացումը (ձեռագրերի Ա և Բ խմբերի սահմաններում) սկսվել է 1056-1059 թթ. հետո և ո՛չ մինչ այդ, և ո՛չ էլ *ԽԱ*. (41) կանոնախմբերի սահմաններում:

Հավելենք, որ վերոնշյալ եզրահանգման «սակայն միմյանցից անկախ տարբեր ուղղութիւններով» արտահայտությունը, Ն. Միրզոյանը հերթական անգամ «ընկերաբար փոխառել է» Ն. Վարդանյանի Ատենախոսությունից. «XI դարի առաջին կեսից (1056-1059 թթ.) հետո «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն շարունակում է ընդարձակվել եւ զարգանալ, սակայն արդեն միմյանցից անկախ երկու ուղղութիւններով» (Ատենախոսություն, էջ 51): Մեխանիկական պարզունակ արտագրության արդյունքում Ն. Միրզոյանը չի նկատել, որ Ն. Վարդանյանը խոսում է 1056-1059 թթ. հետո կատարված իրողությունների մասին, իսկ ինքն այս նախադասությունն անգիտաբար ձևափոխել և տեղադրել է մինչև 1056-1059 թթ. կատարված խմբագրությունների համատեքստում:

Գրագողության և նյութը ճիշտ չընկալելու, սխալ վերաձևակերպելու ևս մեկ օրինակ է ձեռագրերի Ա խմբի մինչև 1098 թ. իրականացված խմբագրությանն առնչվող հետևյալ նախադասությունը. «Մատենագրական տեղեկությունների բացակայության պատճառով տակավին խնդրահարույց է քննարկվող ժամանակաշրջանում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Ա խմբի կանոնախմբերի ներմուծման հարցը» (ՄՄ, էջ 213):

Հստակեցնենք, որ կանոնախմբերի ներմուծման հարցը 1056-1059 թթ. հետո խնդրահարույց չէ, քանզի փաստացի ունենք ՄԷ. (57) կանոնախմբեր 1098 թ. ընդօրինակությունը: Խնդրահարույց է կանոնախմբերի երբ և ում կողմից ներմուծված լինելու հարցը: Նյութին շտիրապետելու հետևանքով սխալ է

հասկացել և վերաձևել ն. Վարդանյանի հետևյալ տողերը. «Մատենագրական տեղեկությունների և փաստերի բացակայությամբ պայմանավորված՝ այսօր անհնար է ցույց տալ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի կանոնախմբերի՝ 1056-1059 թվականներից հետո տեղի ունեցած աճը, խոսել խմբագրի կամ խմբագիրների մասին» (Ատենախոսություն, էջ 52, հմմտ. նույնի՝ Կանոնագիրք Հայոց» ժողովածուի խմբագրությունները (Լ. դարի երկրորդ կես – ժԱ. դարի երկրորդ կես), էջ 59):

Հաջորդ նախադասության մեջ ն. Միրզոյանը ևս մեկ անգամ ապացուցում է, որ ինքն երբևէ չի ուսումնասիրել նոր Զուղայի 131 թվահամարի գրչագիրը. «Ձեռագրերի Ա խմբի 1098 թ. Կիլիկիայի Սև լեռան Պառլահու վանքում ընդօրինակված նոր Զուղայի 131 թվահամարի ձեռագիրը ժԱ դարի վերջերին արդեն բովանդակում էր Ծէ (57) կանոնախումբ, ինչը վկայում է այն մասին, որ 1098 թ. Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբն այլ փոփոխությունների է ենթարկվում. ավելանում է 16 կամ 17 կանոնախումբ» (ՄՄ, էջ 213):

Չանդրադառնալով նախադասության ոճային սխալներին, թվականների անտեղի կրկնություններին՝ ևս մեկ անգամ շեշտենք, որ ն. Միրզոյանը ձեռքի տակ չի ունեցել նոր Զուղայի 131 ձեռագրի ո՛չ թվային տարբերակը, ո՛չ էլ առավել ևս ծանոթ է դրա՝ Մաշտոցյան Մատենագրարանում պահվող լուսանկարչական պատճենին (ըստ ՄՄ սպասարկման մատյանների՝ նա այս լուսանկարչական պատճենը երբևէ չի պատվիրել):

Այսպես, խնդրո առարկա ձեռագրի գրչության վայր նշելով Կիլիկիայի Սև լեռան Պառլահու<sup>28</sup> վանքը, ն. Միրզոյանը բացահայտում է, որ ամբողջությամբ չի ընթերցել նույնիսկ ձեռագրի հիշատակարանը, հակառակ դեպքում տեղյակ կլիներ, որ գրիչը ձեռագիրն սկսել է ընդօրինակել Սև լեռան Պառլահու վանքում, սակայն ինչ-ինչ պատճառներից գրգռված տեղափոխվել է Արմեն լեռան Հովհաննա անապատ, որտեղ և ավարտել է ընդօրինակությունը: Այսինքն՝ ձեռագրի գրչության վայրերն են Պառլահու վանքն ու Հովհաննա անապատը: Այս պարզ օրինակը փաստում է նաև, որ ն. Միրզոյանը նույնիսկ չի կարդացել հիշատակարանի տպագիր տարբերակը<sup>29</sup>, ավելին՝ չի էլ թերթել Ե.-ժԲ. դարերի հիշատակարանների ժողովածուի համապատասխան էջերը, թեև անհասկանալի հղում է կատարել ժողովածուի 118-րդ էջին: Հակառակ դեպքում, կարծում ենք, սույն ժողովածուի 117-րդ էջին կտեսներ, որ որպես գրչության վայր ներկայացված են վերը նշված երկու վայրերն էլ, այլ ոչ միայն Պառլահու վանքը:

<sup>28</sup> Առավել հայտնի է վանքի Պառլահո անվանումը. տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 307:

<sup>29</sup> Յուզակ հայերեն ձեռագրաց նոր Զուղայի, էջ 816-817, նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ժԲ դդ., աղյու. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 117-119:

Անհասկանալի է նաև, թե 1098թ. տեղի ունեցած ինչ «այլ փոփոխություններ» նկատի ունի Ն. Միրզոյանը նախադասությունների կրկրորդ մասում, որ հղված է Ն.-ԺԲ. դարերի հիշատակարանների ժողովածուի 118-րդ էջին: Հատկանշական է, որ Նոր Զուղայի 131 ձեռագրի հիշատակարանում առհասարակ, և նշված հատվածում մասնավորաբար, «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում իրականացված որևէ փոփոխության, կանոնախմբերի հավելման վերաբերյալ ուղղակի տեղեկություն չկա: Տարօրինակ է նաև նախադասության՝ Վ. Հակոբյանի աշխատությունը հղված վերջին հատվածը. «ավելանում է 16 կամ 17 կանոնախումբ»: Այս հղմամբ Ն. Միրզոյանը կրկին տպավորություն է ստեղծում, թե 16 կամ 17 կանոնախմբի հավելումը Վ. Հակոբյանի տեսակետն է: Այնինչ վերջինս իր աշխատության մեջ, Ն. Միրզոյանի նշած էջերում (ՄՄ, էջ 213, ծնթ. 20) հատկապես, հստակ նշում է 17 կանոնախմբի հավելման մասին:

Այսպիսով, Ն. Միրզոյանը, «յուրացնելով» Ն. Վարդանյանի առաջադրած տեսակետը (տե՛ս ստորև), Վ. Հակոբյանի տեսակետին զուգահեռ նշում է նաև 16-ը և գրագողությունը թաքցնելու նպատակով հղում Վ. Հակոբյանի աշխատությանը: Այս ամենի եզրահանգումն էլ ավելի խառն ու հակազիտական բնույթ է ստանում:

Այսպես, եթե վերաբերյալ հատվածում Ն. Միրզոյանը գրում է, որ այդ կանոնախմբերն ավելացել են 1098 թ.՝ կրկնելով Վ. Հակոբյանի տեսակետը, ով կարծում է, որ 41-57 (ԽԱ.-ՄԷ.) կանոնախմբերը 1098 թ.-ին են ներառվել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեջ (Կանոնագիրք Հայոց, հ. Բ, «Ներածություն», էջ XXVI-XXVII), ապա հաջորդ նախադասության մեջ հակասում է ինքն իրեն և գրում. «Այսպիսով կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հերթական ընդլայնումն իրականացվել է ԺԱ դարի երկրորդ կեսին՝ 1056-1059 թվականներից հետո՝ մինչև 1098 թվականն ընկած ժամանակահատվածում ԽԱ (41) կամ ԽԲ-ՄԷ (42-57) կանոնախմբերի շրջանակում»: Այստեղ էլ արդեն, որպես իր եզրահանգում, ներկայացնում է Ն. Վարդանյանի առաջադրած տեսակետը. «Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հերթական խմբագրությունը տեղի է ունեցել 1056-1059 թվականներից հետո մինչև 1098 թվականն ընկած ժամանակահատվածում... ավելացվել են հետևյալ 16 կանոնախմբերը» (Ատենախոսություն, էջ 55, տեսակետը՝ հիմնավորումներով, տե՛ս նույն տեղում, էջ 52-56), նաև «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի (ձեռագրերի Ա խումբ) հերթական խմբագրությունը կատարվել է 1056-1059 թթ. հետո մինչև 1098 թվականն ընկած ժամանակահատվածում: Այս խմբագրության ժամանակ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի ԽԱ (41) կանոնախմբերին ավելացվել են ԽԲ.-ՄԷ. (42-57) կանոնախմբերը» («Կանոնագիրք Հայոց». Լ.-ԺԱ. դդ), էջ 62, տեսակետը՝ հիմնավորումներով, տե՛ս նույն տեղում էջ 59-62):

Այսպիսով, երկու իրար հակասող տեսակետների ապաշնորհ, արհեստա-

կան միակցումը հնարավորություն չի տալիս ընթերցողին հասկանալու ի վերջո 16 թե՞ 17 կանոնախումբ է ավելացվել, և՛ 1098 թ. թե՞ մինչև 1098 թ. են ավելացվել այդ կանոնախմբերը:

Ինչևէ, սույն բաժնի հաջորդ գլուխը ևս առանձնանում է անգրագետ գրագողության և կեղծ, մտացածին եզրահանգումների ակներև օրինակներով:

Խոսելով Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի (Ն. Միրզոյանի թյուրընկալմամբ Ա խմբագրության՝ ՄՄ, էջ 214) հետագա ընդլայնման, ժԲ. դարի մատենագիրներ Մխիթար Գոշի և Ներսես Լամբրոնացու կիրառած Կանոնագրքերի մասին՝ «հեղինակը» գրում է. «Ներսես Լամբրոնացու գործածած Կանոնագիրքն այլ բովանդակություն ուներ, և վերջնասահմանը ժԲ դարն էր» (ՄՄ, էջ 214): Սակայն, թե ի՞նչ նկատի ունի այլ բովանդակություն ասելով, որո՞նք են օրինակները կամ ի՞նչ է նշանակում «վերջնասահմանը ժԲ դարն էր» արտահայտությունը Ն. Միրզոյանը չի պարզաբանում: Հաջորդիվ իր ոչինչ չասող, հակագիտական եզրահանգումները փորձում է հիմնավորել Ներսես Լամբրոնացու՝ իր «տեսակետի» հետ որևէ աղերս չունեցող հիշատակարանի հետևյալ տողերով. «Այս առումով հետաքրքրական է նրա (իմա՝ Ներսես Լամբրոնացու) հիշատակարաններից մեկում առկա հետևյալ տեղեկությունը. «Եւ խուզեալ ընդ նա մեր յարկեղս գրոց կաթողիկոսարանին՝ ոչ գտաք օրէնս, բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հարց ժողովոց էր գրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ...» (ՄՄ, էջ 214):

Ինչպես տեսնում ենք, մեջբերված հատվածում, բացի այն, որ Ներսես Լամբրոնացին կաթողիկոսարանում մի Կանոնագիրք կամ Կանոնագրքեր է գտել, որևէ տեղեկություն չի հաղորդվում գտած Կանոնագրքի կամ Կանոնագրքերի բովանդակության ու ծավալի մասին: Սակայն այս հանգամանքը ևս Ն. Միրզոյանի համար խոչընդոտ չէ, այս մի քանի նախադասությունն անգամ բավարար են նրան է՛լ ավելի հեռուն գնացող եզրահանգումներ անելու համար. «Ներսես Լամբրոնացու օրենսգիրքը, այն է՝ «Սկևռայի մեծ կանոնագիրքը» հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այս խմբագրությունը կատարվել է ժԱ դարի վերջից՝ 1098 թվականից հետո՝ մինչև ժԲ դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում» (ՄՄ, էջ 214):

Այսինքն՝ Ներսես Լամբրոնացու հիշատակարանի այդ մի քանի տողը հնարավորություն են տալիս Ն. Միրզոյանին կաթողիկոսարանում (որն ի դեպ Հռոմկլայում էր) գտած Կանոնագիրքը կոչել «Սկևռայի մեծ կանոնագիրք»: Իսկ միգուցե Ն. Միրզոյանը ձեռքի տակ ունի՞ հայագիտությանը դեռևս անհայտ նյութեր, որոնք փաստում են, որ տվյալ ժամանակաշրջանում Սկևռան է եղել կաթողիկոսանիստ: Ավելին՝ նշված հիշատակարանի սուղ վկայությունները թույլ են տալիս Ն. Միրզոյանին եզրակացնելու, որ Ներսես Լամբրոնացու Կանոնագիրքն այլ բովանդակություն է ունեցել, և ամենակարևորը ցույց տալ, որ ժԱ.

դարի վերջից՝ 1098 թվականից հետո՝ մինչև ժԲ. դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում իրականացվել է Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հերթական խմբագրությունը: Սակայն թե որն է այդ «այլ բովանդակությունը», ինչ ընդգրկում է ունեցել տվյալ խմբագրության շնորհիվ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն կամ ինչ փոփոխությունների է ենթարկվել, իհարկե, Ն. Միրզոյանը չի պարզաբանում: Զի պարզաբանում, քանզի ներսես Լամբրոնացու սույն հիշատակարանի մեջբերումն ընդամենն իր գրագողությունը քողարկելու հերթական անհաջող փորձն է: Իրականում իր «եզրահանգումները» Ն. Միրզոյանն այս անգամ ևս «փոխառել է» Ն. Վարդանյանից. «... այս խմբագրությանն է պատկանել նաև ներսես Լամբրոնացու կամ «Սկևռայի մեծ Կանոնգիրքը», ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այս խմբագրությունը կատարվել է XI դարի վերջից (1098 թ.) հետո մինչև XII դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում» (Ատենախոսություն, էջ 66):

Այստեղ անհրաժեշտ է հստակեցնել, որ ներսես Լամբրոնացու կամ Սկևռայի մեծ Կանոնագիրքը մեզ չի հասել, և մենք չենք կարող պնդել, թե ներսես Լամբրոնացու գործածած Կանոնագիրքը հենց կաթողիկոսարանում գտնված ձեռագիրն է: Ներսես Լամբրոնացու Կանոնագրքից մեջբերումներ է կատարել նշանավոր մատենագիր Գևորգ Սկևռացին (Լամբրոնացին՝ 1246-1301 թթ.) իր կազմած Տոնացույցի մեջ և հենց այս բնագրում է, որ այդ Կանոնագիրքը կոչվում է նաև Սկևռայի մեծ կանոնագիրք<sup>30</sup>: Սույն Տոնացույցում պահպանված որոշ կանոնների ընդհանուր համարների ու Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի գրչագրերի համեմատության շնորհիվ էլ Ն. Վարդանյանը բացահայտել է, թե ձեռագրերի Ա խմբի որ ենթախմբին է պատկանել ներսես Լամբրոնացու կամ Սկևռայի մեծ Կանոնագիրքը, տվյալ ենթախմբի ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրության շնորհիվ էլ ցույց է տվել, թե խմբագրական ինչ աշխատանքներ են կատարվել ԾԸ. (58) կանոնախմբերից բաղկացած այս ենթախմբում<sup>31</sup>:

Հավելենք, որ «**Ներսես Լամբրոնացու գործածած Կանոնագիրքն այլ բովանդակություն ուներ**» եզրահանգումն էլ Ն. Միրզոյանը «փոխառել» է Վ. Հակոբյանից. «**Ներսես Լամբրոնացին ունեցել է Կանոնագրքի մի այլ տարբերակ**» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ, «Ներածություն», էջ XXVII): Վերջինս, համեմատության եզրեր անցկացնելով ժամանակակիցներ Մխիթար Գոշի և ներսես Լամբ-

<sup>30</sup> Մայր Յուզակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ., կազմ. Նորայր եպ. Պողարեան, Երուսաղեմ, 1972, էջ 500-501, նաև ՄՄ 3919, 208ա, 214ա, 215ա, 217ա:

<sup>31</sup> Ն. Վարդանյանի՝ նյութին առնչվող բացահայտումներն ու հիմնական եզրահանգումները տե՛ս Ն. Վարդանյան, «Սկևռայի մեծ Կանոնգիրքը և դրա պատկանելությունը Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբին», Կանթեղ, Երևան, 2014, 1, էջ 101-115, նույնի՝ Ատենախոսություն, էջ 57-64, նույնի՝ «Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբ. IX- XVII դդ.», էջ 38-40, նույնի՝ «ՄՄ 3919 ձեռագրի գրչության վայրի ու թվականի հարցի շուրջ», Երիտասարդական 3-րդ գիտա-ժողովի գեկուցումներ, Երևան, 2018, էջ 291-305:

րոնացու գործածած Կանոնագրքերի միջև, ընդամենն ընդգծում է, որ Կամբրոնացու օրինակը ժԱ. դարի ընդգրկումն ունի (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, «Ներածություն», էջ XXVII):

Այսպիսով, Ն. Միրզոյանը, համատեքստից կտրելով Վ. Հակոբյանի միտքը, կցել է Ն. Վարդանյանի տեսակետին և կառուցել «իր բացառիկ եզրահանգումները»:

Ակնհայտ է, որ «հեղինակը» ունակ չէ նույնիսկ տեսակետների տարրական համախմբում իրականացնել, և որ իր գրագողությունն ապաշնորհ կերպով քողարկելու նրա փորձերն էլ ավելի շփոթ են առաջացնում առանց այդ էլ ոչ այնքան դյուրըմբռնելի թեմայի պարագայում:

Իսկ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հաջորդ խմբագրությունը վերաբերող եզրահանգումն այս անգամ արդեն առանց քողարկման, աննշան վերաշարադրմամբ ամբողջությամբ Ն. Վարդանյանի տեսակետի «յուրացումն» է.

Ն. Վարդանյան	Ն. Միրզոյան
<p>«Այսպիսով 1416 թվականից հետո՝ մինչև XVII դար Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերին ավելացվել են Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի և Հակոբ Արիմեցու վերը նշված կանոնախմբերը, իսկ արդեն XVII դարում (մինչև 1651 թ.) այդ կանոնախմբերը, համապատասխան՝ մասնավոր և ընդհանուր համարակալմամբ, ընդգրկվել են ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում: ... Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի շրջանակներում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այս վերջին խմբագրության օրինակն են ներկայացնում ՄՄ 7580 և ՄՄ 3291 գրչագրերը:</p> <p>Այսպիսով 1416 թվականից հետո մինչև XVII դարի առաջին կեսն (մինչև 1651 թ.) ընկած ժամանակահատվածում իրականացված հերթական խմբագրության ժամանակ «Կա-</p>	<p>«Ժե-ժէ դարերում՝ 1416 թվականից հետո՝ մինչև ժէ դարի առաջին կես (1651 թ.) կանոնագիր ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերին ավելացվել են Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի և Հակոբ Արիմեցու կանոնախմբերը՝</p> <p>ԾԸ. Կանոնք երրորդ Բարսղի Կեսարացոյ. Գլուխ ՀԳ,</p> <p>ԾԹ. Կանոնք Յոհան Ոսկեբերանի վարդապետի, Գլուխ ԾԳ,</p> <p>Կ. Կանոնք եւ պորտահամար ազգակցութեան Յակոբայ Արիմեցոյ սասցեալ:</p> <p>ժէ դարում այս կանոնախմբերը ներմուծվել են ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում: Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբագրության վերը ներկայացված խմբագրության օրինակն են ներկայացնում ՄՄ 7580 և ՄՄ 3291 ձեռագրերը»:</p> <p>(ՄՄ, էջ 214)</p>



<p>նոնագիրք Հայոց» ժողովածուն հարստացվել է հետևյալ կանոնախմբերով.</p> <p>ԾԸ. Կանոնք երրորդ Բարսղի Կեսարացոյ. Գլուխ ՀԳ. (= Հէ.):</p> <p>ԾՔ. Կանոնք Յոհան Ոսկեբերան վարդապետի. Գլուխ ՃԳ.:</p> <p>Կ. Կանոնք եւ պորտահամար ազգակցութեան Յակոբայ Արիմեցոյ ասացեալ»:</p> <p>(Ատենախոսութիւն, էջ 69, հմմտ. «Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբ. IX- XVII դդ.», էջ 42-43)</p>	
---	--

Այսպիսով 1416 թ. որպէս ժամանակային բաժանարար գիծ առաջին անգամ նշել է Ն. Վարդանյանը՝ ՄՄ 10137 ձեռագրում պահպանված՝ Հակոբ Արիմեցու հեղինակած նախագաղափար հիշատակարանի տեղեկութիւնների հիման վրա<sup>32</sup>:

«մինչև 1651 թ.» ևս Ն. Վարդանյանի եզրագծումն է՝ ըստ վերը նշված փոփոխութիւնները պարունակող ՄՄ 7580 (1651 թ.) ձեռագրի:

Եվ վերջապէս՝ այստեղ գրագողութիւն ցայտուն ապացույցը Հակոբ Արիմեցու կանոնների վերնագիրն է: Այն Ն. Միրզոյանը նույնութեամբ պատճենել է Ն. Վարդանյանի Ատենախոսութիւնից: Բացի Ատենախոսութիւնից, Ն. Միրզոյանն այս վերնագիրը կարող էր արտագրել միայն ՄՄ 7580 և 3291 ձեռագրերից, քանզի միայն այս ձեռագրերի բովանդակութիւն ցանկերում են Հակոբ Արիմեցու «Յաղագս ազգականութեան» և «Յաղագս պսակի» երկերը միավորված վերոնշյալ խորագրի ներքո<sup>33</sup>:

\*\*\*

Հակագիտական եզրահանգումներով, սխալ հղումներով և գրագողութիւններով աչքի ընկնող սույն բաժնի երկրորդ ենթաբաժնում, խոսելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման և հետագա ընդլայնման մասին, Ն. Միրզոյանը, հարցի թյուրմբռնման պատճառով, այնպիսի խառնաշփոթ է ստեղծում, որտեղ ինքն անգամ բազմիցս խճճվում է: Չանդրադառնալով վերջինիս

<sup>32</sup> Ն. Վարդանյան, Ատենախոսութիւն, էջ 67-68, նաև նույնի՝ «Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբ. IX- XVII դդ.», էջ 41:

<sup>33</sup> ՄՄ 3291, 167ա-8ա, ՄՄ 7580, 59բ: Հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ Ն. Միրզոյանը Մաշտոցյան Մատենադարանի՝ իր շարադրամբում նշած որևէ ձեռագիր չի ուսումնասիրել:

թույլ տված բազմաթիվ սխալներին՝ կներկայացնենք դրանցից կարևորագույնները միայն:

Այսպես, Ն. Միրզոյանն իր շարադրանքում Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման և Ա խմբում ԽԱ. (41) կանոնախմբերի ընդգրկման հարցերին անդրառնալիս, հիմնականում առանց հղման, բազմիցս գործածում է 1056-1059 թթ. ժամանակային բաժանումը (ՍՄ, էջ 210-213, 215, 217-218, 225): «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի զարգացման պատմության ուսումնասիրման համար կարևոր Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման սույն թվագրումն իրականում համապատասխան հիմնավորումներով առաջադրել է Ռ. Վարդանյանը (բանավոր փոխանցմամբ): Վերջինիս առաջարկով էլ դեռևս 2014 թ. այն իր աշխատանքներում գիտական հանրությունն է ներկայացրել Ն. Վարդանյանը<sup>34</sup>: Ն. Միրզոյանը, օգտագործելով Ռ. Վարդանյանի տեսակետը, բուն շարադրանքում երբևէ չի նշում ուսումնասիրողի անունը, և միայն էջ 217-218-րդ էջերում ներկայացնելով տեսակետը հիմնավորումներով տողատակում նշում է. «Տէ ս նաև տոմարագետ և կանոնագետ պ.գ.դ. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռ., Դասախոսություններ (անտիպ)» (ՍՄ, էջ 217, ծնթ. 26): Այստեղ «Տէ ս նաև» ձևակերպումը ենթադրում է, որ հեղինակն ինքնուրույն է նման եզրահանգման եկել, և որ իրենից հետո նման տեսակետ հայտնել է նաև Ռ. Վարդանյանը: Մինչդեռ ինչպես ցույց տվեցին համեմատությունները, Ն. Միրզոյանի սույն հատվածի շարադրանքը ևս փոխառված է Ն. Վարդանյանի աշխատանքներից և գրեթե բառացի համընկնում է նրա ձևակերպումներին.

Ն. Վարդանյան	Ն. Միրզոյան
<p>«... Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի կազմավորման ժամանակ խմբագիրները բնագրում իրենց ժամանակին համարժեք ամսաթվերն են ներմուծել: Այս փոփոխության շնորհիվ էլ հնարավոր է դառնում որոշել Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման մոտավոր ժամանակը, որ է 1056-1059 թթ. ընկած ժամանակահատվածը»: (Ատենախոսություն, էջ 78)</p>	<p>«Բ խմբի նախնական տարբերակի կազմավորման ժամանակ խմբագիրները բնագրում իրենց ժամանակին համարժեք ամսաթվերն են ներմուծել...: Դրա հիման վրա հնարավոր է դառնում որոշել Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման մոտավոր ժամանակը՝ 1056-1059 թվականներին»:  (ՍՄ, էջ 218)</p>

<sup>34</sup> Ն. Վարդանյան, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 132-133, նույնի՝ Ատենախոսություն, էջ 77-78:

Հաջորդիվ էլ, խոսելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի մասին, Ն. Միրզոյանը գրում է. «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական տարբերակի խմբագիրները վերագրասավորել են Ա խմբի մինչև ԺԱ դարի կեսերն իրականացված խմբագրության Խ (40) կամ ԽԱ (41) կանոնախմբերն ըստ ժամանակագրական հաջորդականության և հեղինակային պատկանելության՝ միավորելով նույն հեղինակների մի քանի գործեր միևնույն համարի ներքո: Այսպես ձևավորվել է կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակը» (ՄՄ, էջ 218):

Ինչպես և ակնկալելի էր՝ Ն. Վարդանյանի տեսակետի հերթական փոխառումն է. «... Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական տարբերակի խմբագիրը կամ խմբագիրները, վերագրասավորել և վերախմբավորել են Ա խմբի 41 կանոնախմբերն ըստ ժամանակագրական հաջորդականության և հեղինակային պատկանելիության՝ համախմբելով նույն հեղինակների մի քանի գործեր միևնույն համարի ներքո» (Ատենախոսություն, էջ 72):

Այստեղ, վերոնշյալ պարբերությունից առաջ էլ, ներկայացնելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի ձևավորման ժամանակի վերաբերյալ Վ. Հակոբյանի տեսակետը (իրականում Վ. Հակոբյանի տեսակետի՝ Ն. Վարդանյանի վերաշարադրանքի վերարտադրությունը<sup>35</sup>), Ն. Միրզոյանը տպավորություն է ստեղծում, թե հետագայում ևս Վ. Հակոբյանի տեսակետներն են արտացոլված: Մինչդեռ նյութին ծանոթ ընթերցողը տեղյակ է, որ Վ. Հակոբյանը ԽԱ. (41) կանոնախմբերի, առավել ևս բովանդակության ցանկում նույն հեղինակների մի քանի գործերը միևնույն համարի ներքո միավորելու մասին առհասարակ չի խոսել: Իսկ եթե սրանք իր՝ Ն. Միրզոյանի եզրահանգումներն են, ապա նա նախ պետք է նշեր, թե որ ձեռագրերն են ներկայացնում Բ խմբի նախնական տարբերակը և հիմնավոր փաստարկներով ապացուցեր իր եզրահանգումները:

Ընդգծենք, որ սույն խնդիրը ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրմամբ ու համապատասխան փաստարկներով պարզաբանված է Ն. Վարդանյանի Ատենախոսության «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնավորումը» ենթագլխում

<sup>35</sup> Ն. Միրզոյան. «Նա (խմա՝ Վ. Հակոբյան) Բ խմբագրության առաջացման ժամանակ է դնում 990-ական թվականները... Նոր Ջուղայի 131 թվահամարի ձեռագրի առաքելայական ցանկին» (ՄՄ, էջ 218). հմմտ. Ն. Վարդանյան. «Ուսումնասիրողը (խմա՝ Վ. Հակոբյան) Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացումը դնում է X դարի 90-ական թվականներին... մոտակա հաջորդ մի քանի տարիներին»: ... Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակը... համընկանում է A (Նոր Ջուղա 131 – Ն. Վ.) ձեռագրի առաքելայական ցանկին փոփոխված կարգահամարներով» (Ատենախոսություն, էջ 71, հմմտ. Եսայնի՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 130-131):

(էջ 70-78): Այստեղ ներկայացված են խնդրին առնչվող եզրահանգումները՝ համապատասխան հիմնավորումներով, ինչպես նաև ձեռագրերի Բ խմբի այս ենթախմբի բովանդակության ցանկի և բովանդակած նյութերի զուգահեռ համեմատությունը (Ատենախոսություն, էջ 74-76), ինչից և ակնհայտ է դառնում միևնույն հեղինակների մի քանի գործերը նույն համարի ներքո դնելու փաստը<sup>36</sup>:

Հավելենք, որ այս ենթաբաժնում Ն. Միրզոյանը ոչ միայն «յուրացրել» է Ն. Վարդանյանի տեսակետները, այլև իր հակադիտական ապաշնորհությամբ աղավաղել է Ն. Վարդանյանի տարիների ուսումնասիրության արդյունքները՝ ցույց տալով, որ ի զորու չէ անգամ գրագետ արտագրել:

Այնպիսի տպավորություն է, որ Ն. Միրզոյանը, ոչ թե նպատակ է հետապնդել համապարփակ գիտական ուսումնասիրություն ներկայացնել, լուսաբանել հարցի էությունը, այլ ուղղակի լրացրել է ժողովածուի՝ իրեն հանձնարարված հատվածի համապատասխան էջերը:

Ներկայացնենք մի քանի օրինակ.

Ն. Վարդանյան	Ն. Միրզոյան
<p>«... Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը 78 կանոնախմբերի սահմաններում ձևավորվել է XIII դարում, կիրիկյան նշանավոր մատենագիր, քաղաքական և եկեղեցական գործիչ, վարդապետ Գևորգ Սկևռացու (Լամբրոնացու, 1245-1301 թթ.) խմբագրության արդյունքում»:</p> <p>(«Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 136)</p>	<p>«ԺԳ դարում Բ խմբագրությունը նոր կանոնախմբերով է հարստանում: Ձեռագրերի այս խմբի վերջնական տարբերակի մեջ իր հավելումներն է անում ԺԳ-ԺԴ դարերի հայ ականավոր մատենագիր, մեկնիչ, եկեղեցական գործիչ, վարդապետ Գևորգ Սկևռացին (նաև՝ Լամբրոնեցի, Սսեցի, Կիրիկեցի) (1245-1301 թթ.)»:</p> <p>(ՍՄ, էջ 218)</p>

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի ԺԳ. դարում իրականացված խմբագրությունը ևս Ն. Վարդանյանի առաջադրած տեսակետն է, ով այս եզրակացությունն է հանգել մատենագրական վիկայությունների, ձեռագրերի մանրակրկիտ

<sup>36</sup> Ն. Վարդանյանի՝ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի վերաբերյալ տեսակետներն ու հիմնավորումներն առավել համառոտ տե՛ս նաև Ն. Վարդանյան, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 130-133, նույնի՝ «Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», էջ 50-52:

համեմատության, առկա ուսումնասիրությունների և փաստերի համադրության շնորհիվ: Գևորգ Սկևռացու խմբագրությանն է նվիրված Ն. Վարդանյանի Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ մասը՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի» Գևորգ Սկևռացու իրականացրած խմբագրությունը» խորագրով (Ատենախոսություն, էջ 78-122): Այստեղ Ն. Վարդանյանը հանգամանալից ներկայացնում է իր տեսակետը՝ նախորդ ուսումնասիրողների տեսակետների հետ զուգորդությամբ, մանրակրկիտ նկարագրում այս խմբագրության ընթացքում իրականացված փոփոխությունները՝ ձեռագրական նյութի հիման վրա<sup>37</sup>:

Ն. Միրզոյանը, ծանոթ լինելով Ատենախոսությանը և այնտեղ մանրամասն ներկայացված փաստարկներին, գրագողության փաստը կոծկելու նպատակով դիմել է պարզունակ մի հնարքի, եղած հիմնավորումներից ընտրել է միայն մեկը և ամենից հայտնին՝ Անկյուրիայի Կարմիր վանքի 43 թվահամարի ձեռագրի նկարագրության մեջ (Ծանոթություն բաժնում) պահպանված Հակոբ Քյոթահացու հիշատակարանը<sup>38</sup>, և միայն այստեղ առկա վկայության հիման վրա «եզրակացրել», որ ձեռագրերի Բ խմբի 40 կանոնախմբերից հետո իրականացված խմբագրության հեղինակը Գևորգ Սկևռացին է: Սակայն մոռացել է նշել մի պարզ փաստ ևս, որ այս հիշատակարանը ծանոթ է եղել նաև Վ. Հակոբյանին, որը, համադրելով վերոհիշյալ ձեռագրի նկարագրության մեջ պահպանված Հակոբ Արիմեցու հիշատակարանը, կարծում է, որ Բ խմբի 40-65 կանոնախմբերն ավելացրել է անհայտ խմբագիրը, իսկ 66-78-ը՝ Հակոբ Արիմեցու ուսուցիչ Գևորգ Երզնակցին<sup>39</sup>: Ավելին, Ն. Միրզոյանը նախորդ ուսումնասիրողներից (Ն. Ակինյան, Վ. Հակոբյան, Ն. Վարդանյան) տարբերվելու համար Հակոբ Քյոթահացու վերոնշյալ հիշատակարանի մասին խոսելիս, հավատարիմ մնալով աղբյուրների հղման իր մեթոդին (օգտվել մի աղբյուրից և նշել այդ աղբյուրի սկզբնաղբյուրը), վկայակոչում է ոչ թե սկզբնաղբյուր հանդիսացող Բ. Կյուլեսերյանի կազմած ձեռագրացուցակը, կամ թեկուզ ժէ. դարի հիշատակարանները:

<sup>37</sup> Գևորգ Սկևռացու իրականացրած խմբագրությանն առնչվող հարցերը սեղմ կամ ընդարձակ ընդգրկվամբ արտացոլված են Ն. Վարդանյանի հետևյալ հոդվածներում. տե՛ս Ն. Վարդանյան, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 133-136, **նույնի**՝ «Գևորգ Երզնակցին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», էջ 52-54, **նույնի**՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի XIV դարից հետո մինչև XVII դարի վերջն իրականացված սրբագրումներն ու խմբագրումները», *Պատմություն եւ հասարակագիտություն տարեգիրք (Փիտական հոգվածների ժողովածու)*, Երևան, 2016, 2, էջ 152-153 (այսուհետ՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. XIV- XVII դդ.»), **նույնի**՝ «Գևորգ Սկևռացին և «Կանոնագրու շարժումը»», *Հանրագիտություն*, 2019, էջ 295-311:

<sup>38</sup> **Բարզեն արքունիկից կաթողիկոս**. Յուզակ ձեռագրաց Անկյուրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, սյուն. 264-266:

<sup>39</sup> Վ. Հակոբյան, *Կանոնագիրք Հայոց*, «Ներածություն», և. Բ, էջ XXXIV-XXXVI:

րի համապատասխան հատորը, այլ ուղղակի կորուսյալ ձեռագիրը: Իսկ ավելի ստույգ, ինչպես կտեսնենք ստորև, վկայակոչում է մի ձեռագիր, որն իր արձանագրած տվյալներով. «Կանոնագիրք, թ. 43 (1609), գրիչ՝ Ասլան, վայր՝ Կ. Պոլիս, ստացող՝ Յակոբ Քէօթահեացի» (ՄՄ, էջ 218, ծնթ. 28) երբևէ գոյություն չի էլ ունեցել: Իհարկե, ինչպես և մնացյալ «կարևորագույն, խիստ գիտական» հղումների դեպքում այստեղ ևս նշված չեն ձեռագրի համապատասխան էջահամարները:

Այսպիսով ն. Միրզոյանը, օգտվելով ժէ. դարի հիշատակարանների Ա հատորից, հղման մեջ նշել է ոչ թե այդ աշխատության համապատասխան էջերը, այլ այստեղ արձանագրված տվյալները՝ ուշադրություն չդարձնելով կազմողների 58-րդ ծանոթագրությունը<sup>40</sup>: Հակառակ դեպքում կտեղեկանար, որ «Կանոնագիրք, ՅԱԲ, N 43 (1609)» տվյալները (ն. Միրզոյանի հղման առաջին մաս. «Կանոնագիրք, թ. 43 (1609)») վերաբերում են Անկյուրիայի՝ 1609 թ. ընդօրինակված թիվ 43 ձեռագրին, իսկ գրչի, գրչության վայրի և ստացողի տվյալները (ն. Միրզոյանի հղման երկրորդ մաս. «գրիչ՝ Ասլան, վայր՝ Կ. Պոլիս, ստացող՝ Յակոբ Քէօթահեացի»)՝ 1611 թ. Հակոբ Քյոթահեացու պատվերով ընդօրինակված ձեռագրին, որի հիշատակարանի մի մասը Բ. Կյուլեսերյանը որպես ծանոթագրություն ներկայացրել է Ազարիա Սասնեցու պատվերով Միմէոն Լեհացու կողմից ընդօրինակված Անկյուրիայի թիվ 43 ձեռագրի նկարագրությունը կից: Այսպիսով ն. Միրզոյանը միմյանց կապելով երկու տարբեր ձեռագրերի տվյալներ, ստացել է մի անգո ձեռագիր:

Անշուշտ, պ.գ.թ., դոցենտ ն. Միրզոյանը պետք է որ նաև տեղյակ լիներ, որ ձեռագրերին հղում կատարելիս անհրաժեշտ է նշել նույն ձեռագրերի պահպանման վայրը՝ հավաքածուն և համապատասխան թերթահամարները: Այլապես իր հղումից պարզ չէ թե տվյալ թ. 43 Կանոնագիրքը որ հավաքածուի մասն է և հստակ որ թերթին է գտնվում վերոնշյալ հիշատակարանը: Ինչևէ, այս հակագիտական հղումը ն. Միրզոյանի՝ աղբյուրների հանդեպ անփույթ, մակերեսային վերաբերմունքի, ձեռագրագիտական գիտելիքների բացակայությունից վառ օրինակներից է:

Ընդգծենք, որ խեղաթյուրված այս հղման շնորհիվ վաղուց արդեն կորած այդ ձեռագրերի, կամ ավելի ճիշտ ն. Միրզոյանի «հորինած» ձեռագրի տվյալները որպես սկզբնաղբյուր հայտնվել են նաև սույն ժողովածուի գրականության ցանկում<sup>41</sup> (տե՛ս ՄՄ, էջ 873):

<sup>40</sup> Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 450, ծնթ. 58:

<sup>41</sup> Նշենք նաև, որ գրականության ցանկում են հայտնվել նաև ն. Միրզոյանի կողմից չօգտագործված մյուս ձեռագրերը ևս. «ՄՄ հմր 3148 ձեռագիր: Նոր Զուղայի 131 թվահամարի գրչագիր» (ՄՄ, էջ 873):

Ուշագրավ է, որ Ն. Միրզոյանը չի հասկացել անգամ, որ Հակոբ Քյոթահիացու հիշատակարանն ընդօրինակված է ոչ թե բուն ձեռագրում, այլ այն Արմաշի Ս. Աստվածածին վանքի վանահայր Գևորգ Ալեքսանյանի Հիշատակարանի մի մասն է, որ Բ. Կյուլեսերյանը որպես ծանոթագրություն ներկայացրել է Անկյուրիայի Կարմիր վանքի 43 թվահամարի ձեռագրի նկարագրությունը կից<sup>42</sup>:

Հաջորդիվ Ն. Միրզոյանը վերոնշյալ հիշատակարանի տեղեկությունների հիման վրա «նոր ու ցնցող» եզրահանգումներ է կատարում. «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբագրության ուսումնասիրման տեսակետից շատ կարևոր են քննարկվող հիշատակարանում Հակոբ Քյոթահիացու հաղորդած տեղեկությունները, որոնց հիման վրա եզրակացնում ենք, որ ԺԳ դարում ձևավորվել է ժողովածուի Բ խումբը Գևորգ Սկևռացու խմբագրության շնորհիվ: Ուստի, սա այն գլխավոր աղբյուրն է, որ նշում է այս համահավաք օրենսգրքի Բ խմբագրության հեղինակին՝ Գևորգ Սկևռացուն» (ՍՄ, էջ 219):

Փաստորեն, Ն. Միրզոյանը Հակոբ Քյոթահիացու հիշատակարանի այս սուղ տեղեկությունը. «...տեսի անդ կանոնս, կատարեալ գիր կանոնաց, զոր հաւաքեալ էր զկանոնս առաքելոց, վարդապետաց, հայրապետաց սրբոց սուրբ վարդապետն Գէորգ Կիլիկեցին, որ է Սսեցին...»<sup>43</sup>, առանց հավելյալ վկայությունների և կարևորագույն աղբյուրների՝ Կանոնագիրք ձեռագրերի ուսումնասիրության, բավարար է համարում նման եզրահանգում անելու համար: Հատկապես ուշագրավ է, թե առանց որևէ ձեռագիր ուսումնասիրելու Ն. Միրզոյանն ինչպես է կարողանում այս վկայությունից եզրակացնել, թե կանոնախմբերի որ շերտն է հավելել Գևորգ Սկևռացին, կամ ինչ փոփոխություններ է կատարել ժողովածուում: Ավելին՝ խճճվելով իր իսկ ստեղծած խառնաշփոթում, գրում է. «... եզրակացնում ենք, որ ԺԳ դարում ձևավորվել է ժողովածուի Բ խումբը Գևորգ Սկևռացու խմբագրության շնորհիվ՝ մոռանալով, հավանաբար, որ մի քանի պարբերություն առաջ պնդում էր, թե ձեռագրերի Բ խումբը ձևավորվել է 1056-1059 թթ. Ա խմբի Խ. կամ ԽԱ. կանոնախմբերի հիման վրա (տե՛ս ՍՄ, էջ 217-218):

Ավելին՝ Ն. Միրզոյանը հավելում է. «Ուստի, սա այն գլխավոր աղբյուրն է (իմա՝ Հակոբ Քյոթահիացու հիշատակարանը), որ նշում է այս համահավաք օրենսգրքի Բ խմբագրության հեղինակին՝ Գևորգ Սկևռացուն»:

Շեշտենք, որ հիշատակարանում չկա և չէր էլ կարող լինել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի որևէ խմբագրության անվանում: Կանոնագիրք ձեռագրե-

<sup>42</sup> Յուզակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, սյուն. 263-268:

<sup>43</sup> Յուզակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, սյուն. 266, նաև Հայերեն ձեռագրերի փ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), Բ. Ա., էջ 451:

րի Ա և Բ խմբաբաժանումները (Ն. Միրզոյանի թյուրընկալմամբ խմբագրությունները) 20-րդ դարում առաջ եկած պայմանական անվանումներ են, և 17-րդ դարում, նույնիսկ 19-րդ դարում գրիչներն, անգամ ուսումնասիրողները չէին տարբերակում Կանոնագիրք ձեռագրերի նմանատիպ բաժանումներ: Ավելին, Ն. Միրզոյանը տեղյակ չէ նաև, որ Ն. Ակինյանը նույն հիշատակարանի միևնույն տողերի հիման վրա Գևորգ Սկևռացուն է վերագրել Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի՝ 60 կանոնախմբերից բաղկացած տարբերակի խմբագրությունը<sup>44</sup>, չնայած որ իր շարադրանքում այլ առիթներով Ն. Միրզոյանը հղում է Ն. Ակինյանի տվյալ աշխատությանը (տե՛ս ՍՄ, էջ 219, ծնթ. 29, էջ 223, ծնթ. 39):

Ն. Միրզոյանի՝ նյութը լիովին չընկալելու, ոչ միայն նախորդ ուսումնասիրողների տեսակետներին, այլև սեփական շարադրանքին անտեղյակության, շարադրանքի հանդեպ անփութ վերաբերմունքի փայլուն ապացույցն է հաջորդ անհեթեթ նախադասությունը. «Վերջինս (Գևորգ Սկևռացին – Ն. Վ.) իր ավելացրած կանոնախմբերը վերցրել է նախորդ Ա և Բ խմբերից և նշել հեղինակին» (ՍՄ, էջ 219):

Այստեղ Ն. Միրզոյանը չի բացատրում, թե ի՞նչ է նշանակում «նախորդ Ա և Բ խմբերից» արտահայտությունը:

Նախ՝ Ա և Բ խմբերն ընդհանուր հասկացություն է: Գրանցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է մի քանի ենթախմբերից, հետևաբար հեղինակը պետք է մասնավորեցներ, թե որ ենթախմբերից է օգտվել Գևորգ Սկևռացին:

Եվ երկրորդ՝ եթե, նախորդ նախադասություններում հեղինակը եզրակացնում է, որ Բ խումբը ձևավորվել է ԺԳ. դարում Գևորգ Սկևռացու խմբագրության շնորհիվ կամ Բ խմբագրության հեղինակը Գևորգ Սկևռացին է (տե՛ս ՍՄ, էջ 219), ապա անհասկանալի է, թե ինչ նախորդ Բ խմբից է օգտվել Գևորգ Սկևռացին:

Իսկ թե ի՞նչ է նշանակում «նշել հեղինակին» արտահայտությունը, առհասարակ կարող է բացատրել միայն Ն. Միրզոյանը, քանզի իր խմբագրական աշխատանքի ընթացքում Գևորգ Սկևռացին որևէ կանոնախմբի հեղինակային պատկանելության հարց չի քննարկել կամ չի ճշգրտել<sup>45</sup>:

<sup>44</sup> Ն. Ակինեան, «Ազարիա վ. Սասնեցի. Աստղագետ, տօմարագետ եւ տաղաչափ». ՀԱ, 1936, յուլիս-սեպտեմբեր (թիւ 7-9), պլում. 324: Այստեղ Ն. Ակինյանը Գևորգ Սկևռացու Կանոնագրին առավել մոտ տարբերակ է դիտարկում Վիեն. 810 թվահամարի Կանոնագիրքը (ձեռագրերի Ա խումբ): Հարկ է նշել, որ Ն. Ակինյանի այս և հաջորդիվ առաջ փաշած որոշ տեսակետներ արժանացել են Վ. Հակոբյանի քննադատությանը (տե՛ս Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, «Ներածություն», էջ XXXV-XXXIX): Ընդգծեմք, սակայն, որ Վ. Հակոբյանի քննադատության առանձին կետեր Ն. Ակինյանի առաջադրած տեսակետի քյուրվորմամբ արդյունք են: Ն. Ակինյանի՝ այստեղ արտահայտած տեսակետների և Վ. Հակոբյանի դրանց քյուրվակալումների պարզաբանումը տե՛ս Ն. Վարդանյան, Առենախոսություն, էջ 89-90:

<sup>45</sup> Կարծում ենք, որ վերոնշյալ արտահայտությունը Ն. Վարդանյանի հետևյալ մտքի սխալ վերաշարադրումն է. «...վերադասավորելով դրանք (իմա՝ կանոնախմբերը) ըստ հեղինակա-



Այսու՝ ակնհայտ է, որ Ն. Միրզոյանն առհասարակ չի հասկանում՝ ինչ է ասել Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբեր, ինչ ենթախմբերից են դրանք կազմված, որն է այդ ենթախմբերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Եվ դա բնական է, քանզի նա ծանոթ չէ և չի ուսումնասիրել այդ ենթախմբերից գեթ մեկական ձեռագիր:

Այն, որ Ն. Միրզոյանը ծանոթ չէ ձեռագրական հարուստ նյութին և պատկերացում չունի ձեռագրական բաժանումների և դրանց առանձնահատկությունների մասին, ակներև է 219-220 էջերին զետեղված կանոնախմբերի ցանկից: Սույն ցանկը, որ Ն. Միրզոյանը ներկայացնում է որպես «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Գևորգ Սկևռացու խմբագրության բովանդակության ցանկ, վերցված է ոչ թե նշանավոր մատենագրի խմբագրությունը պատկանող որևէ ձեռագրից, այլ «կազմել» է ինքը՝ Ն. Միրզոյանը: Միմյանց կապակցելով Վ. Հակոբյանի ուսումնասիրության մեջ առկա Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երեք տարբեր ենթախմբերի բովանդակության ցանկերը՝ նա ստացել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ բոլորովին «նոր», հայագիտությանը մինչ այժմ անհայտ, իրականում գոյություն չունեցող բովանդակության ցանկ հետևյալ հղմամբ. «Ըստ Վ. Հակոբյանի դասակարգման (Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ XXXI-XXXIII)» (ՄՄ, էջ 220, ծնթ. 31):

Փաստորեն, այս անգամ էլ Ն. Միրզոյանը խեղաթյուրում է Վ. Հակոբյանի աշխատանքի արդյունքը՝ նրան վերագրելով կանոնախմբերի իր «անգրագետ» դասակարգումը և զանց առնում այն կարևորագույն հանգամանքը, որ Վ. Հակոբյանը «Կանոնագիրք Հայոց» մեծարժեք աշխատության մեջ բացառում է Գևորգ Սկևռացու մասնակցությունը ժողովածուի խմբագրման աշխատանքներին<sup>46</sup>: Եթե Ն. Միրզոյանը գեթ ջանք գործադրեր և ուշադիր կարդար Վ. Հակոբյանի աշխատության համապատասխան հատվածները, ապա հավանաբար կնկատեր, որ իր մատնանշած էջերին վերջինս ներկայացրել է Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երեք տարբեր ենթախմբերի բովանդակության ցանկեր, որոնցից որևէ մեկն, ըստ Վ. Հակոբյանի, չի առնչվում Գևորգ Սկևռացու իրականացրած խմբագրությանը: Կնկատեր, որ իր «հորինած» ցանկի **ԽԱ-ԽԶ վերնագրերը** պատկանում են մի ենթախմբի (Վ. Հակոբյանի ներկայացրած առաջին ենթախումբ՝ *befgg*՝ ՄՄ 8380, 783, 8006, 5148, 8236 –Ն. Վ.), որն այդպես էլ հետագայում

յին և բովանդակային առանձնահատկությունների»», Ն. Վարդանյան, *Ատենախոսություն*, էջ 117, **նույնի՝** «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. XIV- XVII դդ.», էջ 153, **նույնի՝** «Գևորգ Սկևռացին և «Կանոնագրության» բանաձևը» երկը», էջ 301:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ XXXIV-XXXV:

չի ընդարձակվել և հավելյալ կանոնախմբեր չի ընդգրկել<sup>47</sup>, **ԽԵ-ԿԵ** խորագրերը՝ այն ենթախմբին (ըստ Վ. Հակոբյանի *hlou*՝ ՄՄ 3368, 8938, 660, 9769 – Ն. Վ.), որտեղ, ինչպես կարծում է Վ. Հակոբյանը, **ԽԱ-ԿԵ** կանոնախմբերն ավելացվել են մինչև 14-րդ դար, մինչև Գևորգ Երզնկացու խմբագրությունը<sup>48</sup>, իսկ **ԿԶ-ՀԸ վերնագրերը**՝ այն ենթախմբին (ըստ Վ. Հակոբյանի *acdkmprsv*՝ ՄՄ 7615, 8964, 2676, 654, 2677, 3544, 3098, 10137 – Ն. Վ.), որը Վ. Հակոբյանի կարծիքով ներկայացնում է Գևորգ Երզնկացու խմբագրությունը<sup>49</sup>:

Եվ եթե նա Գևորգ Սկևռացու խմբագրությանը պատկանող մեկ ձեռագիր ուսումնասիրած լիներ կամ թեկուզ թերթած, ապա պետք է որ նկատեր, որ իր «հորինած» ցանկն ընդհանրապես չի համապատասխանում Գևորգ Սկևռացու խմբագրությունը ներկայացնող ձեռագրերի ցանկերին: Ավելին, հավանաբար կտեսներ, որ իր նշած **ԽԱ.**, **ԽԵ.**, **ԽԶ.** միավորներն (տե՛ս ՄՄ, էջ 219) առհասարակ ընդգրկված չեն «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Գևորգ Սկևռացու խմբագրության մեջ, իսկ «Կանոնք Երկրորդ Եպիփանու. Գլուխ Գ» վերտառությամբ **ԽԲ.** միավորը (տե՛ս ՄՄ, էջ 219) էականորեն տարբերվում է Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի մյուս ենթախմբերում (այդ թվում նաև Գևորգ Սկևռացու խմբագրությունը ներկայացնող ենթախմբում) առկա տարբերակից, և որ հաջորդիվ **ԾԳ.** և **ԿԷ.** վերնագրերի ներքո (տե՛ս ՄՄ, էջ 219-220) էլ ինքը ներկայացնում է նույն կանոնախմբի Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի մյուս ենթախմբերում առկա տարբերակը<sup>50</sup>: Կնկատեր նաև, որ իր ներկայացրած ցանկից դուրս է մնացել Գևորգ Սկևռացու խմբագրության մեջ ընդգրկված «Սրբոյն Եղիշէի ի Կանոնաց գրոց. Գլուխ Ա» կանոնախումբը, որ նշված խմբագրության

<sup>47</sup> Վ. Հակոբյան, *Կանոնագիրք Հայոց*, «Ներածություն», հ. Բ, էջ XXXI: Հարկ է նշել, որ Վ. Հակոբյանը, ներկայացնելով այս ենթախմբի առարկայական ցանկը, հստակ նշում է այս մասին. «Այս ենթախումբը իրենից ներկայացնում է Կանոնագրի լրացման մի առանձին թև, որից հետո նոր բնագրերի ավելացում տեղի չի ունեցել» (Վ. Հակոբյան, *Կանոնագիրք Հայոց*, «Ներածություն», հ. Ն Բ, էջ XXXI): Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի այս ենթախմբի մասին առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ XXX-XXXI, նաև Ն. Վարդանյան, *Ատենախոսություն*, էջ 129-130:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ XXXVI: Բնագրենք, որ Վ. Հակոբյանի՝ սույն ենթախմբի ներկայացրած ցանկը ֆաղված է ոչ թե տվյալ ձեռագրերի բովանդակության ցանկերից (այս ենթախմբի ձեռագրերում բովանդակության և առարկայական ցանկերն ընդգրկում են միայն ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի Խ. (40) կանոնախմբերի վերնագրերը (տե՛ս ՄՄ 8938, 1ա-10ա)), այլ, ընդամենը Վ. Հակոբյանի վերականգնումն է ըստ տվյալ ենթախմբի I (ՄՄ 8938 – Ն. Վ.) գրչագրի բովանդակության (տե՛ս Վ. Հակոբյան, *Կանոնագիրք Հայոց*, հ. Բ, «Ներածություն», էջ XXI-XXII, XXXI- XXXII):

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Սույն կանոնախումբը Կանոնագիրք ձեռագրերի տարբեր խմբերում առկա օրինակներով, նմանություններով և տարբերություններով տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 268-280, 388-392:

Թե ցանկերում, Թե բուն ժողովածուում գտնվում է *ԽԶ*. (46) համարի ներքո<sup>51</sup>:

Ինչևէ՛ այս ամբողջ անճշտություններից, թյուրընկալումներից ու խառնաշփոթից հետո էլ *Ն*. Միրզոյանը եզրակացնում է. «Այսպիսով Գևորգ Սկևռացին խմբագրել է Կանոնագիրքը ձեռագրերի Բ խմբի *ԽԱ-ՀԸ* (41-78) կանոնախմբերի շրջանակներում: Լրացնելով բովանդակության և առարկայական ցանկերը՝ խմբագիր-կանոնագիրն ավելացրել է 13 կանոնախումբ» (ՄՄ, էջ 220): Ապա հաջորդիվ ներկայացնում է այն կանոնախմբերը, որոնք «իր կարծիքով» ավելացրել է Գևորգ Սկևռացին (տե՛ս ՄՄ, էջ 220-221):

*Ն*. Միրզոյանի «ներկայացրած» այս ցանկը հերթական անգամ փաստում է, որ «հեղինակը» ոչ միայն չի տիրապետում կանոնագրիտությանն առնչվող տարրական հարցերին, այլ անգամ անտեղյակ է իր իսկ շարադրանքից:

Այսպես օր.՝ Գևորգ Սկևռացու ավելացրած «նոր» կանոնախմբերի շարքում *Ն*. Միրզոյանը նշում է այնպիսի կանոնախմբեր, որոնք ընդգրկված են եղել ոչ միայն «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձեռագրերի Ա խմբի մինչև 1056-1059 թթ. իրականացրած խմբագրության մեջ, օր. «1. Դ. Կանոնք Փրկիպոսի առաքելոյ գլուխս Ը.»<sup>52</sup> (ՄՄ, էջ 220), կամ մինչև 1098 թ. կատարված խմբագրության մեջ, ինչպես օր. իր նշած «4. ԿԷ. Հարցումն Թէոդոսի քահանայի առ երանելին Եպիփան վասն Քառասնորդաց և այլոց պահոցն գլուխս Ա»<sup>53</sup> (ՄՄ, էջ 221), այլև Հովհաննես Օձնեցու՝ դեռևս Ը. դարում կազմած ժողովածուի մեջ «2. ԺԵ. Կանոնք Բ Բարսղի առ Թէոդորոս գլուխս Ա»<sup>54</sup> (ՄՄ, էջ 221): Եվ եթե առնվազն ուշադիր թերթեր տպագիր Կանոնագիրքը, կտեսներ, որ իր թվարկած վերոնշյալ կանոնախմբերը մինչև Գևորգ Սկևռացու խմբագրությունն էլ ներառված են եղել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում: Ավելին, *Ն*. Միրզոյանը նույնիսկ չի անդրադարձել, որ այդ կանոնախմբերը նշված են իր շարադրանքի՝ վերոնշյալ խմբագրություններին առնչվող հատվածներում (տե՛ս ՄՄ, էջ 210, 212, 213, 215):

Ինչևէ, այս խեղաթյուրումներից հետո էլ, առանց որևէ հիմնավորման *Ն*. Միրզոյանը եզրակացնում է. «Վերոբերյալ կանոնախմբերից 3-ը հեղինակային են՝ ՀԱ, ՀԲ, ՀԸ՝

<sup>51</sup> ՄՄ 8964, 2ա, 188ա-191ա, ՄՄ 10137, 1բ, 186բ-189ա:

<sup>52</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Բ. էջ 41-45:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 277-80: Հարկ է նշել, որ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբում «Կանոնք Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ Եպիսկոպոսի մեծի և առաքինոյ մարգարէի և նշանագործի, Գլուխք Գ.» (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 268-280) առկա կանոնախումբը ձեռագրերի Բ խմբում Գևորգ Սկևռացու իրականացրած խմբագրության ժամանակ բաժանվել է երկու մասի (առավել մանրամասն տե՛ս *Ն. Վարդանյան*, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 134-135, նույնի՝ *Ատենախոսություն*, էջ 82):

<sup>54</sup> Կանոնագիրք Հայոց, էջ 358-362:

**ՀԱ. Կանոնք զգուշաւոր քահանայից. Համառատ,**  
**ՀԲ. Վասն զգուշութեամբ սպասաւորելոյ սուրբ խորհրդոյն,**  
**ՀԸ. Վասն քահանայագործութեան կարգաց պատրաստութիւն. գլուխ ԻԷ»**  
(ՄՄ, էջ 221):

Զարմանալի է, թէ ինչպէս կարող է որևէ Կանոնագիրք ձեռագիր, հետևաբար նաև նշված անտիպ բնագրերը<sup>55</sup> երբևէ շուտամնասիրած անձն առանց որևէ փաստարկի, հիմնավորման նման եզրահանգում անել, հատկապես որ որևէ ձեռագրում սույն կանոնախմբերի հեղինակը նշված չէ:

Իհարկէ, ինչպէս արդեն հասկանալի է, սա Ն. Վարդանյանի եզրահանգումների հերթական «փոխառությունն» է: Սույն տեսակետն առաջադրել է մատենագրական վկայությունների ու ձեռագրական նյութի համադրությամբ հանգամանալից ներկայացրել է Ն. Վարդանյանն իր աշխատանքներում<sup>56</sup>:

Գրագողության փաստն ակնհայտ է վերոնշյալ ՀԱ., ՀԲ., ՀԸ. կանոնախմբերի վերնագրերից իսկ: Այս կանոնախմբերի վերնագրերն էականորեն տարբերվում են Ն. Միրզոյանի՝ 219-221 էջերին ներկայացրած բովանդակության ցանկի համապատասխան խորագրերից: Անհամապատասխանության պատճառն այն է, որ Ն. Միրզոյանը Գևորգ Սկևռացու խմբագրության իր «հորինած» ցանկի վերնագրերը քաղել է Վ. Հակոբյանի ուսումնասիրությունից, իսկ այս երեք կանոնախմբերի խորագրերը մի քանի տող անց ներկայացրել ըստ Ն. Վարդանյանի Ատենախոսության տվյալների: Իսկ սույն ուսումնասիրողների մոտ խորագրերի տարբերությունների աղբյուրը տարբեր ենթախմբերին պատկանող ձեռագրերն են: Այսպես՝ Վ. Հակոբյանն իր ցանկը բերել է ըստ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբի 78 կանոնախմբերի փ՛. դարում իրականացված սրբագրության (ըստ Վ. Հակոբյանի՝ Գևորգ Երզնկացու խմբագրության) ՄՄ 2676 (մ ըստ Վ. Հակոբյանի) ձեռագրի (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, «Ներածություն», էջ XXXII), իսկ Ն. Վարդանյանը, որն իր ուսումնասիրության ընթացքում վերաբաժանել է Վ. Հակոբյանի կողմից արված ենթախմբային դասակարգումը<sup>57</sup>, ըստ Գևորգ Սկևռացու խմբագրությունը ներկայացնող ՄՄ 8964, 10137 գրչագրերի:

Այսպիսով, լավ չընկալելով Գևորգ Սկևռացու խմբագրական աշխատանքներին առնչվող Ն. Վարդանյանի առաջադրած տեսակետները՝ Ն. Միրզոյանը հերթական անգամ սխալ եզրակացություններ և գիտական կեղծիքներ է հրամցնում ընթերցողներին և ապացուցում, որ առհասարակ գաղափար չունի, թէ ինչ ենթախմբերից է բաղկացած Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը և որ ձեռագրերն են ներկայացնում այս կամ այն խմբագրությունը:

55 Սույն կանոնախմբերը հրատարակության է պատրաստում Ն. Վարդանյանը:  
56 Ն. Վարդանյան, Ատենախոսություն, էջ 101-112, նաև նույնի՝ «Գևորգ Սկևռացին և «Կանոնագրուշատր ֆահանայից» ետևը», էջ 297, 302-310:  
57 Ն. Վարդանյան, Ատենախոսություն, էջ 78-138, նույնի՝ Սեղմագիր, էջ 16-18:

Ն. Միրզոյանի ստեղծած այս խառնաշփոթն էլ ավելի է խճճվում, երբ հաջորդիվ «հեղինակը» որոշում է ներկայացնել ձեռագրերի Բ խմբի հետագա ընդլայնման (ԽԱ.-ՀԼ. կանոնախմբեր) վերաբերյալ Վ. Հակոբյանի՝ իր թյուրընկալումներով համեմված տեսակետը (տե՛ս ՄՄ, էջ 221-222):

Ինչպես արդեն նշել ենք, Վ. Հակոբյանը ձեռագրերի Բ խմբի ընդլայնումը ներկայացնում է երկու փուլով՝ համարելով, որ ԽԱ.-ԿԵ. կանոնախմբերն ավելացվել են Ժ. դարի 90-ական թվականներից հետո՝ մինչև ԺԳ. դարի կեսերը, անհայտ անձնավորության կողմից, իսկ ԿԶ.-ՀԼ. կանոնախմբերն ավելացրել է Գևորգ Երզնկացին ԺԳ.-ԺԵ. դդ.:

Հավելենք, որ Վ. Հակոբյանի առաջադրած այս վարկածը ձեռագրագիտական և աղբյուրագիտական հիմնարար փաստարկներով դեռևս 2014-2015 թթ. հերքել է Ն. Վարդանյանը<sup>58</sup>, ում տեսակետն էլ Ն. Միրզոյանը, «յուրացնելով», ավելին, չհասկանալով, խեղաթյուրել և ներկայացրել է նախորդիվ: Ինչից հետո էլ, անհասկանալիորեն, վերադառնում և արծարծում է Վ. Հակոբյանի առաջադրած տեսակետը: Ավելին, ի վիճակի չլինելով վերարտադրել Վ. Հակոբյանի տեսակետը ճշգրտություն, առաջացնում է հերթական խառնաշփոթը:

Այսպես՝ Ն. Միրզոյանը, Վ. Հակոբյանին վերագրելով վերջինիս մտքերի իր թյուրընկալումները, 221-222-րդ էջերում գրում է. «ԺԳ-ԺԵ դարերում Հակոբ Ղրիմեցու ուսուցիչ Գևորգ Երզնկացին (մոտ 1350-ական թթ. 1416 թ.) նոր խմբագրություն է իրականացնում. հավելում է ԿԶ-ՀԼ (66-78) կանոնախմբերը: Վ. Հակոբյանն այս տեսակետն է արտահայտել՝ հիմնվելով Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանի 43 թվահամարի գրչագրում ԺԵ դարում Հակոբ Ղրիմեցու ձեռքով գրված ԿԵ կանոնախմբի վկայության վրա» և մեջբերում մի հատված համապատասխան հիշատակարանից:

Այսպիսով Ն. Միրզոյանի վերաշարադրանքի ընդգծված հատվածից կարելի է հասկանալ է, թե Անկյուրիայի թիվ 43 գրչագիրը գրվել է ԺԵ. դարում, կամ էլ Հակոբ Ղրիմեցին այնտեղ ԺԵ. դարում նշում է կատարել, և որ Հակոբ Ղրիմեցու վկայությունը գրված է ԿԵ. (իմա՝ Միմէոն Աղվանից կաթողիկոսի) կանոնախմբից հետո և վերաբերում է այդ կանոնախմբին: Մինչդեռ Անկյուրիայի թիվ 43 ձեռագիրն ընդօրինակվել է 1609 թ., և Վ. Հակոբյանը հստակ նշում է (Անկյուրիայի ձեռագրացուցակում էլ արձանագրված է՝ տե՛ս Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ..., սին. 234-235), որ Հակոբ Ղրիմեցու հիշատակարանը գտնվում է այս ենթախմբի վերջին՝ «Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաս-

<sup>58</sup> Ն. Վարդանյան, Ատենախոսություն, էջ 78-129, նույնի՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. 78 կանոնախմբեր», էջ 133-138, նույնի՝ «Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», էջ 50-60:

տուլթիւն» (ՀԼ.) կանոնախմբից հետո (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածութիւն», էջ XXXVI):

Փաստերի խեղաթյուրման պատճառը ն. Միրզոյանի հակագիտական մոտեցման հերթական կիրառությունն է: Ներկայացնելով Վ. Հակոբյանի տեսակետը, որ հիմնված է Հակոբ Արիմեցու հիշատակարանի տեղեկությունների վրա՝ հղում է ոչ թե Վ. Հակոբյանի ուսումնասիրության համապատասխան էջերը, այլ այս հիշատակարանի դեպքում սկզբնաղբյուր հանդիսացող<sup>59</sup> Բ. Կյուլեսերյանի աշխատանքները (տե՛ս ՍՄ, էջ 222, ծնթ. 34): Եվ իրապես Անկյուրիայի ձեռագրացուցակում «Վասն քահանայագործութեան կարգաց պատրաստութեան» կանոնախմբը ԿԵ. համարի ներքո է: Համարների այս անհամապատասխանությունը Վ. Հակոբյանն անդրադարձել է և ծանոթագրել (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածութիւն», էջ XXXVI, ծնթ. 1): Եվ եթե ն. Միրզոյանն ուշադիր կարդար Վ. Հակոբյանի աշխատանքը, համեմատեր Անկյուրիայի ձեռագրացուցակում ԿԵ. համարի ներքո գտնվող կանոնախմբի խորագիրը գոնե իր իսկ կողմից «հորինված» ցանկի հետ (տե՛ս ՍՄ, էջ 219-220), ապա պետք է որ նկատեր, որ Անկյուրիայի ձեռագրացուցակում ԿԵ. համարով նկարագրողի կողմից համարակալված է Կանոնագիրք ձեռագրերում ՀԼ. համարը կրող «Վասն քահանայագործութեան կարգաց պատրաստութիւն» «իրեն քաջ հայտնի» կանոնախմբը: Չէ որ դրանից առաջ նա այս և ՀԱ., ՀԲ. կանոնախմբերը «ուսումնասիրել» էր և անվանել «հեղինակային»՝ վերագրելով, հավանաբար, Գևորգ Սկևռացուն:

Այս ամենը ն. Միրզոյանը չի նկատել, որովհետև, ինչպես ցույց տվեցին մեր պրպտումները, նա իր շարադրանքի վերոնշյալ հատվածի ընդգծված տեղեկությունը քաղել է ոչ թե Անկյուրիայի ձեռագրացուցակից, այլ ն. Վարդանյանի Ատենախոսությունից, որտեղ վերջինս ներկայացնում է Բ. Կյուլեսերյանի տեսակետը. «ԿԵ. (իմա՛ ՀԼ.) կանոնախմբին վերջը յիշատակագրուած է. «Արդ աղաչեմք... գերիցս երանեալ երջանիկ ռաբունին... զմեծ հռետորն Գէորք» (Ատենախոսություն, էջ 86-87): Սույն «փոխառությունը» ն. Միրզոյանն արհեստականորեն ավելացրել է իր կողմից իբրև թե օգտագործված գրականության քանակը՝ տպավորություն ստեղծելով, թե օգտվել է նաև Բ. Կյուլեսերյանի «Նախագրութիւնք Ս. Գրոց եւ Գէորգ Լամբրոնեցի կամ Սկևռացի» վերտառությունը հոգվածից<sup>60</sup>: Ավելին, ամրագրելու համար իր այս «ձեռքբերումը», հետագա-

<sup>59</sup> Նշենք, որ Հակոբ Արիմեցու վերոնշյալ արժեքավոր հիշատակարանը ն. Վարդանյանը Կանոնագիրք ձեռագրերի իր ուսումնասիրությունների ընթացքում, որպես նախագաղափար օրինակի հիշատակարան, հայտնաբերել է նաև 1852 թ. ընդօրինակված ՍՄ 3788 գրչագրում (տե՛ս 88բ):

<sup>60</sup> **Բաբգէն Եպիսկոպոս (Կիլեսերեան)**, «Նախադրութիւնք Ս. Գրոց եւ Գէորգ Լամբրոնեցի կամ Սկևռացի», ՀԱ, Վիեննա, 1915, 1-12, էջ 70-76:

յում՝ էջ 223-րդ էջում, տվյալ հատվածի համատեքստի հետ կապ չունեցող մի «մեջբերում» է կատարում Բ. Կյուլեսերյանի սույն հոդվածից՝ հղելով, սակայն, Բ. Կյուլեսերյանի կազմած Անկյուրիայի ձեռագրացուցակը, որտեղ հեղինակը նման որևէ միտք չի արտահայտում<sup>61</sup>:

Վերադառնալով Վ. Հակոբյանի տեսակետի միրզոյանական մեկնաբանությանը՝ հավելենք, որ Ն. Միրզոյանը, կրկին խեղաթյուրելով ուսումնասիրողի եզրակացությունները, հերթական անգամ նրան է վերագրում իր իսկ թյուրընկալումը. «Այսու՝ Վ. Հակոբյանը «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբագրության 66-78 կանոնախմբերի հեղինակ է համարում Գևորգ Երզնկացուն»:

Նախ, ևս մեկ անգամ ընդգծենք, որ Վ. Հակոբյանը երբևէ չի գործածում Բ խմբագրություն եզրը:

Երկրորդ՝ ըստ Վ. Հակոբյանի՝ Գևորգ Երզնկացին նշված կանոնախմբերի՝ «Կանոնագիրք Հայոց» ներմուծողն է և ոչ հեղինակը, հատկապես, որ այդ կանոնախմբերի հեղինակները հիմնականում նշված են:

Այսպիսով, Ն. Միրզոյանը, այստեղ ևս ներկայացնելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի ընդլայնման (Խ. (40) կանոնախմբերից հետո) վերաբերյալ Ն. Վարդանյանի և Վ. Հակոբյանի՝ միմյանց հակասող տեսակետները, էլ ավելի է շփոթեցնում անտեղյակ ընթերցողին:

Չհերքելով կամ չհաստատելով Գևորգ Երզնկացու խմբագրության վերաբերյալ Վ. Հակոբյանի տեսակետը<sup>62</sup>՝ հաջորդիվ նորից խոսում է Գևորգ Ալեուացու խմբագրության և դրա հետագա սրբագրության մասին՝ ևս մեկ անգամ յուրացնելով Ն. Վարդանյանի տեսակետը<sup>63</sup>. «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Գևորգ Ալեուացու խմբագրած տարբերակը հետագայում՝ մինչև ժէ դար, սրբագրվել է, ենթարկվել մի շարք փոփոխությունների, և վերաշարադասվել են

<sup>61</sup> Իրականում այս անտեղի «մեջբերումը» Ն. Վարդանյանի Ատենախոսության համապատասխան մասի անգրագետ ձևափոխությամբ Ն. Միրզոյանի հերթական «փոխառումն» է, հերթական առագրության միրզոյանական «նոր» մեթոդի (օգտվել մի աղբյուրից, հղում տալ մեկ այլ աղբյուրի) անհաշող կիրառումը: Այսպես՝ Ն. Միրզոյան. «Բ. Կյուլեսերյանը, նշելով Գևորգ Ալեուացու երկերը, Հովհաննես Օձնեցուց հետո նրան է վերագրում «Կանոնագիրք Հայոց» երկրորդ ժողովածուի կազմումը» (ՄՄ, էջ 223): Ն. Վարդանյան. «Բ. Կյուլեսերյանը, նշելով Գևորգ Ալեուացու երկերը, նրան է վերագրում Կանոնագրի «երկրորդ կազմությունը» (Ատենախոսություն, էջ 86):

<sup>62</sup> Հարկ է նշել, որ Ն. Վարդանյանը դեռևս 2015 թ. հիմնավոր փաստարկներով հերքել է Վ. Հակոբյանի վերոնշյալ տեսակետը և պարզել, թե իրականում ինչ դեր է ունեցել Գևորգ Երզնկացին «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձևավորման գործում (տե՛ս Ն. Վարդանյան, «Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», էջ 50-60):

<sup>63</sup> Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի հետագա ընդլայնման և փոփոխությունների վերաբերյալ Ն. Վարդանյանի հիմնական եզրահանգումները տե՛ս Ատենախոսություն, էջ 130-138, նույնի՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. XIV- XVII դդ.», էջ 152-164:

78 կանոնախմբերի կանոնները: Դրա մասին է վկայում Կանոնագրքի ժեղարի ներկայացված հիշատակարանը, ինչը նաև Գևորգ Սկևռացու հեղինակությունն է փաստում» (ՍՄ, էջ 222):

Եթե նախադասության ընդգծված հատվածն ամբողջովին փոխառված է Ն. Վարդանյանի Սեղմագրից («Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Գևորգ Սկևռացու խմբագրած տարբերակը հետագայում՝ մինչև ժեղար, սրբագրվել է, ենթարկվել մի շարք փոփոխությունների» (Սեղմագիր, էջ 17)), ապա երկրորդ մասում, կրկին լավ չըմբռնելով վերջինիս հիմնավորումները, Ն. Միրզոյանն անհիմն եզրակացրել է. «վերաշարագասվել են 78 կանոնախմբերի կանոնները»: Նշենք, որ նման աշխատանք այս խմբի ձեռագրերում երբևէ չի կատարվել, սա Ն. Միրզոյանի հերթական թյուրըմբռնումն է: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ իր այս «եզրահանգումը» նա հիմնավորում է ըստ մի հիշատակարանի, որի մեջ որևէ խոսք չկա ոչ 78 կանոնախմբերի, ոչ առավել ևս դրանց կանոնների վերաշարագասման վերաբերյալ:

Այսպես, 222-րդ էջում Ն. Միրզոյանը, նորից վկայակոչելով Հակոբ Քյոթահիացու հիշատակարանի վերոնշյալ հատվածը, փորձում է ապացուցել նախորդ նախադասության ընդգծված հատվածի «իր», իրականում Ն. Վարդանյանից փոխառված եզրակացությունը, և, թյուրիմացաբար, Ազարիա Սասնեցուն է վերագրում այնտեղ անորոշ նշված «մի շարք» փոփոխությունները. «Քնագիրը (իմա՝ Հակոբ Քյոթահիացու հիշատակարանը) ցույց է տալիս, որ Գրիգոր Կեսարացու աշակերտ Ազարիա Սասնեցին ժեղարում Գրիգոր Կեսարացու օրինակի, այն է՝ Գևորգ Սկևռացու կազմած ժողովածուի մեջ կանոններ է ավելացրել՝ որպես օժանդակ նյութեր: Այդ են փաստում հիշատակարանի ընդգծված տողերը...» (ՍՄ, էջ 222): Ն. Միրզոյանի սույն «եզրահանգումը»<sup>64</sup>, փաստացի որևէ հենք չունի: Այն իրականում Ն. Ակինյանի, Վ. Հակոբյանի և Ն. Վարդանյանի «անհամատեղելի» տեսակետների արհեստական միակցումն է, առանց այդ հեղինակների աշխատանքները հիշատակելու, գործող անձանց անունների փոփոխություններ՝ Գրիգոր Կեսարացի-Ազարիա Սասնեցի, Գևորգ Երզնկացի-Գևորգ Սկևռացի:

Այսպես՝ Ն. Ակինյան. «Գրիգոր Կեսարացի գայն (իմա՝ Կանոնագիրքը) ճոխացուցած է նոր յաւելուածներով, կամ ինչպէս Ազարիա կը վկայէ «նա ի բա-

<sup>64</sup> Նմանատիպ մի միտք էլ արտահայտել էր ավելի վաղ. «Ներկայացված բնագիրը (իմա՝ Հակոբ Քյոթահիացու հիշատակարանը) կառուցվում է նրանով, որ այն տեղեկացնում է ոչ միայն Գևորգ Կիլիկեցու-Սսեցու կանոնագիր խմբագրության, այլև Կոստանդնուպոլսի պատրիարհ Գրիգոր Կեսարացու աշակերտ Ազարիա Սասնեցու խմբագրական աշխատանքների վերաբերյալ: Վերջինս (իմա՝ Ազարիա Սասնեցին) ժեղարի սկզբներին ավելացրել է բնագրեր որպես Կանոնագրքի օժանդակ նյութեր» (ՍՄ, էջ 219):



զու՛մ գրեանց եւ ի բազում տեղեաց ժողովեալ էր ի մի» այլ եւ այլ հատուածներ եւ զանոնք մուծած Գէորգ Լամբրոնացոյ օրինակին մէջ» (Ազարիա վ. Սասնեցի. Աստղագէտ, տօմարագէտ եւ տաղաչափ, սիւն. 324-325):

**Վ. Հակոբյան.** «... Կանոնագրքի Գրիգոր Կեսարացու ունեցած օրինակից (Գեորգ Երզնկացու խմբագրությունից) 1609 թվին Ազարիա Սասնեցին իր համար Սիմեոն Լեհացուն ընդօրինակել է տալիս եւ այսուհետեւ կատարում մի շարք նյութերի ավելացումներ...» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածութիւն», էջ XL):

Ընդգծենք, որ հաշորդիվ (տե՛ս ՍՄ, էջ 222-224) ն. Միրզոյանի վկայակոչած, «իր եզրահանգումը» ապացուցող «փաստարկներն ու հիմնավորումները» անգրագետ գրագողության, բառացի արտագրության կամ վերաշարադրանքի աչք զարնող օրինակներ են՝ «փոխառված» Վ. Հակոբյանի, Բ. Կյուլեսերյանի աշխատանքներից: Այնպիսի տպավորութիւնն է, թե ն. Միրզոյանն ուղղակի ցանկացել է ևս մի քանի էջ լրացնել, ինչն էլ իրագործել է այլ հեղինակների ուսումնասիրութիւններից վերցված ընդարձակ հատվածներով, իրար հակասող տեսակետների անիմաստ միակցմամբ՝ առանց դրանց ճշմարտացիութիւնն անդրադառնալու:

Այսպես, 222-223-րդ էջերում մի ընդարձակ հատված. «Կանոնագրքի համալիր կազմավորման ուսումնասիրման համար խիստ ուշագրավ է Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանի 43 թվահամարի գրչագրում զետեղված հիշատակարանը... այնուհետև 1609 թ. ընդօրինակելու պատվեր տվել Սիմեոն Լեհացուն», չնչին փոփոխութիւններով, «փոխառել» է Վ. Հակոբյանի աշխատասիրութիւնից. «Կանոնագրքի բովանդակության պատմության համար խիստ ուշագրավ է Ազարիա Սասնեցու հիշատակարանը... որից հետո միայն 1609 թվին պատվիրել Սիմեոն Լեհացուն ընդօրինակել Կանոնագրքի Գրիգոր Կեսարացու ունեցած օրինակը» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածութիւն», էջ XXXIX, էջ XXXVI-XXXVII)<sup>65</sup>: Այստեղ, զարմանալիորեն, գրեթե բառացի, համընկնում են ոչ միայն Ազարիա Սասնեցու հիշատակարանի՝ Վ. Հակոբյանի վերապատումը, այլև հիշատակարանից մեջբերված հատվածները, և անգամ հղումները. օր. Կանոնագիրք Հայոց, հտ. Բ., «Ներածութիւն», էջ XXXVI, ծնթ. 2 հմմտ. ՍՄ, էջ 222, ծնթ. 35: Ուշագրավ է, որ մեքենաբար «փոխառված» այս

<sup>65</sup> Վ. Հակոբյանի աշխատասիրության XXXIX էջից առանց հղման փոխառված այս ընդարձակ հատվածին ն. Միրզոյանը 222-րդ էջում կցել է նաև նույն հեղինակի XXXVI-XXXVII էջերում առկա հետևյալ նախադասությունը. «Ազարիա Սասնեցին, ինչպես ինքն է պատմում իր հիշատակարանում... և ապաստանում Գրիգոր Կեսարացու մոտ» հմմտ. ն. Միրզոյան. «Հիշատակարանից տեղեկանում ենք, որ հեղինակը (իսկ՝ Ազարիա Սասնեցին), ինչպես ինքն է պատմում... ու ապաստանում Գրիգոր Կեսարացու մոտ» (ՍՄ, էջ 222):

ծանոթագրությունից հետո, ծնթ. 36-ում և 37-ում ն. Միրզոյանը նշում է. «Անդ, էջ 246», «Անդ, էջ 247» (ՍՄ, էջ 222, 223) շանդրադառնալով, որ սույն հղումներն, իրականում, չեն առնչվում ոչ նախորդ՝ Սիմեոն Լեհացու Ուղեգրությունը, ոչ էլ առավելը՝ դրան նախորդած Բ. Կյուլենբերյանի հոգվածին, այլ վերաբերում են վերջինիս կազմած Անկյուրիայի ձեռագրացուցակին: Ավելին, ծնթ. 37-ից հետո ծնթ. 38-ում էլ Անկյուրիայի ձեռագրացուցակին «սխալմամբ» հղելով տպավորություն է ստեղծում թե նախորդ մեջբերումներն այլ աշխատությունից էին:

223-րդ էջի ն. Միրզոյանի հետևյալ նախագասությունը. «Քննարկվող ընդօրինակությունը կանոնական բնագրերի հավաքածու է և բովանդակում է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», «Կանոնագիրքը», Ներսես Շնորհալու «Քուղթ Ընդհանրականը», կարևոր թղթեր, գործեր և ժամանակագրական տախտակներ, որոնք ամբողջացված դրված են ձեռագրի մեջ՝ Առաքելական կանոնների ցանկից հետո», առանց համապատասխան աղբյուրի նշման, փոխառված է Բ. Կյուլենբերյանի աշխատանքից. «Մատեանս է հաւաքածոյ կանոնական գրոց և զլիսաւորապէս կը բովանդակէ Մ. Գոշի Դատաստանագիրքը, Կանոնագիրքը, Շնորհալոյն Ընդհանրականը, ուրիշ կարեւոր թղթեր և գրուածներ, ժամանակագրական տախտակներ, որոնց բոլորին մէկ ցանկը գրուած է ձեռագրիս մէջ, Առաքելական կանոններու ցանկէն ետքը» (Յուցակ ձեռագրաց Անկյուրիոյ..., էջ 230):

Իսկ 223-րդ էջում ներկայացված ն. Ակինյանի տեսակետը. «Ըստ ն. Ակինյանի՝ Կանոնագրքի Ազարիա Սասնեցու խմբագրությունը բաղկացած է հետևյալ մասերից՝ Գևորգ Լամբրոնացու, Գրիգոր Կեսարացու և Ազարիա Սասնեցու խմբագրություններից... ՀՐ. Վասն քահանայազործութեան... (69). այնուհետև Նիկիայի ժողովի մասնակիցների (70), Հայոց կաթողիկոսների (71) և Կամսարական տան եպիսկոպոսների (72) ցանկեր» կրկին վերցրել է Վ. Հակոբյանի աշխատանքից. «... ըստ Ակինյանի, Կանոնագրքի Ազարիա Սասնեցու խմբագրությունը բաղկացած է հետևյալ մասերից՝ Գևորգ Լամբրոնացու, Գրիգոր Կեսարացու և իր Ազարիա Սասնեցու խմբագրություններից... ՀՐ. Վասն քահանայազործութեան... (69). այնուհետև Նիկիայի ժողովի մասնակիցների (70), Հայոց կաթողիկոսների (71) և Կամսարական տան եպիսկոպոսների (72) ցանկեր» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածութիւն», էջ XXXIX-XL):

Մեջբերված այս օրինակի առաջին և վերջին տողերի<sup>66</sup> բացառիկ նմանություններն արդեն իսկ հուշում են, որ ն. Միրզոյանն այս հատվածն ամբողջությամբ վերցրել է Վ. Հակոբյանի աշխատությունից, առանց համապատասխան

<sup>66</sup> Քննարկվող հատվածները բավականին ընդարձակ են, այդ պատճառով էլ ներկայացրել ենք միայն առաջին և վերջին տողերը:

հղման: Ավելին, ընթացքում հղում կատարելով Ն. Ակինյանի՝ Ազարիա Սասնեցուն նվիրված հոդվածին (տե՛ս ՍՄ, էջ 223, ծնթ. 39), տարբեր աղբյուրներից օգտվելու հերթական խաբկանքն է ստեղծում: Հարկ է նշել, որ մեխանիկորեն արտագրելով Վ. Հակոբյանի՝ Ն. Ակինյանի առաջադրած տեսակետին վերաբերող անդրադարձը, Ն. Միրզոյանը նույնությամբ կրկնել է անգամ Վ. Հակոբյանի՝ Ն. Ակինյանի տեսակետին առնչվող թյուրընկալումները<sup>67</sup>:

Ընդգծենք նաև, որ սույն մեջբերման կարիքն այս համատեքստում առհասարակ չկար, հատկապես, որ թե Վ. Հակոբյանը, թե Ն. Վարդանյանն անդրադարձել են Ն. Ակինյանի՝ նշված հոդվածում արծարծված տեսակետներին, պարզաբանել այստեղ առկա խնդիրները՝ զարգացնելով կամ հերքելով դրանք<sup>68</sup>:

Իհարկե, պարզ է, որ Ն. Միրզոյանը, շրջանցելով վերը նշված հեղինակների ուսումնասիրությունները, Ն. Ակինյանի տեսակետը մեջբերում է, որպեսզի հաջորդիվ ներկայացնի Ազարիա Սասնեցու խմբագրության վերաբերյալ իր «եզրահանգումը» կամ «եզրահանգումները»: Սակայն Ն. Միրզոյանը, Ն. Ակինյանի տեսակետի հիման վրա կառուցելով «իր եզրակացությունը», հաշվի չի առել մի շատ կարևոր հանգամանք. «վերը բերված տեղեկությունները չեն կարող փաստել» Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի շրջանակներում իրականացված որևէ գործընթաց, քանզի Ն. Ակինյանը Գևորգ Սկևռացու (Լամբրոնացու) խմբագրած օրինակը նույնացնում է ոչ թե Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի որևէ ձեռագրի, այլ Վիեննայի Մատենադարանի՝ Ա խմբին պատկանող 810 թվահամարի Կանոնագրքի հետ<sup>69</sup>:

Ավելին, այս անգամ, որպես «իր եզրակացություն», հաջորդաբար ներկայացնում է թե՛ Վ. Հակոբյանի (մի փոքր շտկված) և թե՛ Ն. Վարդանյանի եզրակացությունները կամ եզրակացությունների «անգրագետ» միախառնումը.

1. «Արդ, վերը բերված տեղեկությունները գալիս են փաստելու, որ Ազարիա Սասնեցին ընդօրինակել է «Կանոնագիրք Հայոց»-ի Բ խմբագրության Գևորգ Սկևռացու տարբերակը, որտեղ շուրջ Խ (40) կանոնական բնագրեր են ավելացվել որպես օժանդակ նյութեր» (ՍՄ, էջ 224):

Ն. Միրզոյանի այս «եզրահանգումը» վերաշարադրումն է Վ. Հակոբյանի հետևյալ տողերի. «Ուրեմն, Կանոնագրքի Գրիգոր Կեսարացու ունեցած օրինակից (Գևորգ Երզնկացու խմբագրությունից) 1609 թվին Ազարիա Սասնեցին իր համար Միմեոն Լեհացուն ընդօրինակել է տալիս և այնուհետև կատարում մի

<sup>67</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ն. Վարդանյան, *Ատենախոսություն*, էջ 89-90,

<sup>68</sup> Վ. Հակոբյան, *Կանոնագիրք Հայոց*, հ. Բ, «Ներածություն», էջ XXXVI-XL, նաև Ն. Վարդանյան, *Ատենախոսություն*, էջ 89-90, 137-138, նույնի՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. XIV-XVII դդ.», էջ 161-162:

<sup>69</sup> Ն. Ակինեան, «Ազարիա վ. Սասնեցի. Աստղագիտ. տոմարագիտ եւ տաղաչափ», սյուն. 324:

շարք նյութերի ավելացումներ... Իսկ ի՞նչ նյութեր է մուծել Կանոնագրքում Ազարիա Սասնեցին: Թերևս հարկ չկա թվարկելու բոլոր նյութերը, որոնց թիվը հասնում է շուրջ 40-ի, հետաքրքրվողներին հղում ենք Բաբգեն Կյուլեսերյանի Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանի ձեռագրերի Յուզակի համապատասխան էջերին...» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածություն», էջ XL): Ն. Միրզոյանը փոխել է միայն մի բան՝ Գևորգ Երզնկացու անունը փոխարինել է Գևորգ Սկևռացու անվամբ: Անգամ Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռագրացուցակի նույն էջերն են հղված:

2. Նույն հարցի վերաբերյալ երկրորդ «եզրահանգումը». «Անկյուրիայի 43 թվահամարի ձեռագրում (1609 թ.) Ազարիա Սասնեցու ավելացրած բնագրերը չեն կցվել Կանոնագիրք ժողովածուին, այլ ընդգրկվել են որպես օժանդակ բնագրեր՝ կազմելով կանոնաիրավական մի ժողովածու: Այստեղ է ներառվել նաև Գևորգ Երզնկացու ընդօրինակած «Կանոնագիրք Հայոց»-ի տարբերակը» (ՄՄ, էջ 224) Ն. Վարդանյանի եզրակացությունների վերարտադրությունն է. «XVII դարի հեղինակ Ազարիա Սասնեցին ոչ թե խմբագրել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, այլ ուղղակի մեկտեղել է իրեն հետաքրքրող բնագրերը մեկ ձեռագրում և ստեղծել կանոնա-իրավական մի հավաքածու, որի բաղկացուցիչ մասն է եղել նաև «Կանոնագիրք Հայոց»-ը՝ Գևորգ Երզնկացու ընդօրինակության տարբերակով» (Ատենախոսություն, էջ 144, Սեղմագիր, էջ 18)

կամ

«... պետք է նշենք, որ Ազարիա Սասնեցին ոչ թե խմբագրել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, այլ ուղղակի ստեղծել է կանոնա-իրավական մի հավաքածու, որի բաղկացուցիչ մասն է եղել նաև «Կանոնագիրք Հայոց»-ը, քանզի Անկյուրիայի թիվ 43 ձեռագրում Ազարիա Սասնեցու ավելացրած բնագրերը չեն կցվել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուին, այլ ուղղակի ընդօրինակվել են իբրև դրան լրացնող կամ համարժեք գործեր» (Ատենախոսություն, էջ 137, 138, նաև՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. XIV-XVII դդ.», էջ 161, 162):

Այսպիսով, «յուրացնելով» Վ. Հակոբյանի և Ն. Վարդանյանի տեսակետները, Ն. Միրզոյանն իրար հետևից ներկայացնում է երկու տարբեր կարծիք, որտեղից էլ անհասկանալի է, վերջիվերջո, Ազարիա Սասնեցին խմբագրել է «Կանոնագիրք Հայոց»-ը, թե՞ ոչ, Գևորգ Սկևռացու՞ օրինակն է օգտագործել, թե՞ Գևորգ Երզնկացու: Ընդ որում, Ն. Միրզոյանը չի պարզաբանում, թե ինչ ասել է՝ «Գևորգ Երզնկացու ընդօրինակած «Կանոնագիրք Հայոց»-ի տարբերակ», քանզի նախորդիվ մեջբերված՝ Վ. Հակոբյանի տեսակետում արժարժված Գևորգ Երզնկացու տարբերակը կապ չունի վերը նշված, իրականում Ն. Վարդանյանի առաջադրած տարբերակի հետ: Ն. Վարդանյանը հերքել է Վ. Հակոբյանի՝ Գևորգ Երզնկացու խմբագրական աշխատանքների մասին առաջադրած տեսակետը և ձեռագրական ու մատենագրական հիմնավոր փաստարկներով ապացուցել, որ

Գևորգ Երզնակացին «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն չի խմբագրել, այլ ձեռագրերի Բ խմբի երկու ենթախմբերի արհեստական միավորմամբ ընդօրինակել է մի ձեռագիր Կանոնագիրք, որի բազմաթիվ ընդօրինակությունների հետևանքով էլ առաջացել է ձեռագրերի Բ խմբի «երզնակացիական» տարբերակը:<sup>70</sup>

Ավելին՝ 222-224-րդ էջերում իրար միախառնելով Ն. Ակինյանի, Վ. Հակոբյանի և Ն. Վարդանյանի էականորեն իրարից տարբերվող, տեղ-տեղ անգամ իրար հակադրվող տեսակետները՝ Ն. Միրզոյանն անպատասխան է թողնում Գևորգ Ակևոացու, Գրիգոր Կեսարացու և Ազարիա Սասնեցու իրականացրած կամ չիրականացրած խմբագրությունների հարցը՝ չկողմնորոշվելով անգամ՝ Ազարիա Սասնեցին խմբագրել է «Կանոնագիրք Հայոց»ը, թե՞ ընդօրինակել, և եթե ընդօրինակել է, ապա Գևորգ Ակևոացու, թե՞ Գևորգ Երզնակացու օրինակներից է օգտվել: Տպավորություն է ստեղծվում, թե Ն. Միրզոյանը նույնացրել է և չի տարբերակում միմյանցից 1-2 դար առաջ և հետո ստեղծագործած միջնադարյան նույնանուն հեղինակներին:

Ինչևէ՛ Ն. Միրզոյանն այս ենթաբաժինն ամփոփում է հակագիտական անփութությունամբ շաղախված հերթական անգրագետ արտագրություններով որտեղ հակասում է ինքն իրեն և փոշիացնում մինչ այս կատարած իր որոշ «բացահայտումներ»:

«Առկա տեղեկությունները գալիս են արձանագրելու, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն Ը դարի կեսից հետո իրականացված խմբագրությունների արդյունքում ընդարձակվել է ներառելով նորանոր կանոնախմբեր: Մինչև ժ է դար Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբագրության կանոնախմբերը ենթարկվել են սրբագրման և խմբագրման: Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի ԼԵ-Խ (35-40) կանոնախմբերն ավելացվել են ժ դարի կեսից մինչև ժԱ դարի կեսն ընկած ժամանակահատվածում: «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբագրությունը նոր կանոնախմբերով է հարստացել ժԳ դարում: Ձեռագրերի այս խմբի վերջնական տարբերակի մեջ իր հավելումներն է արել ժԳ-ժԴ դարերի հայ ակադեմիկոս մատենագիր, մեկնիչ, եկեղեցական գործիչ, վարդապետ Գևորգ Ակևոացին:

... Աղյուսակում արտացոլված է միայն «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Բ խմբագրության հարստացումը ժ դարի կեսից մինչև ժԳ դար նորանոր կանոնախմբերով մինչև 78 կանոնախումբ» (ՍՄ, էջ 224):

Այսպիսով,

Նախ՝ Ն. Միրզոյանի ամփոփման առաջին նախադասությունն արտագրված է Ն. Վարդանյանի Սեղմագրից. «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն (ձեռագրե-

<sup>70</sup> Առավել մանրամասն տե՛ս Ն. Վարդանյան, «Գևորգ Երզնակացին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», էջ 50-60, **ճույնի՝** Ատենախոսություն, էջ 122-129:

րի Ա խումբ) VIII դարի կեսից հետո իրականացված խմբագրությունների արդյունքում ընդարձակվել է ներառելով նորանոր կանոնախմբեր» (Սեղմագիր, էջ 15):

Երկրորդ՝ հաջորդիվ, մոռանալով Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի ԽԱ. (41) կանոնախմբերի վերաբերյալ մինչ այս կատարած իր «բացահայտումները» (տե՛ս ՍՄ, էջ 211-212, անդրադարձը տե՛ս վերևում էջ 384-390) նշում է ուղղակի «Լե-Խ (35-40) կանոնախմբեր»:

Երրորդ՝ Գևորգ Սկևռացուն վերագրելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի «վերջնական տարբերակ»ի կազմումը՝ մոռանում է, որ 222-րդ էջում եզրակացրել էր, որ Գևորգ Սկևռացու խմբագրած տարբերակը հետագայում՝ մինչև ժ.Ֆ. դար, սրբագրվել էր և ենթարկվել մի շարք փոփոխությունների», իսկ 219-րդ էջում էլ հաստատել, որ Հակոբ Քյոթահիացու հիշատակարանը «տեղեկացնում է... Կոստանդնուպոլսի պատրիարք Գրիգոր Կեսարացու աշակերտ Ազարիա Սասնեցու խմբագրական աշխատանքների վերաբերյալ»:

Շեշտենք, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Գևորգ Սկևռացու կազմած օրինակը Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի վերջնական տարբերակը չէ: Այն ժ.Ֆ. դ. սրբագրվել է, իսկ ԺԳ.-ԺԷ. դարերի ընթացքում ավելացվել են ևս երեք բնագրեր<sup>71</sup>:

Չորրորդ՝ խոսելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի ընդլայնման պատկերն իբրև թե արտացոլող աղյուսակի մասին, կրկին մոռանալով «իր ծանրակշիռ բացահայտումները» (տե՛ս ՍՄ, էջ 216-218), միախառնում է ձեռագրերի Բ խմբի առաջացման ու ընդլայնման վերաբերյալ Վ. Հակոբյանի (հերթական շփոթի կամ թյուրըմբռնման պատճառով Վ. Հակոբյանի Ժ. դարի վերջ թվագրումն<sup>72</sup> այստեղ դարձել է Ժ. դարի կես) և Ն. Վարդանյանի (ԺԳ. դ.) կարծիքները:

Ավելին, էջ 224-227-րդ էջերում ներկայացված աղյուսակում Կանոնանագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնավորումը թվագրելով «Ժ դարի կեսից մինչև ԺԱ դարակես (մինչև 1056-1059 թթ.)» (ՍՄ, էջ 224-225), միախառնելով Վ. Հակոբյանի մի փոքր ձևափոխված և Ռ. Վարդանյանի թվագրումները՝ մոռանում է 218-րդ էջում արված «իր» եզրահանգումը. «... Գրա (իմա՝ Նիկիայի վավերագրերում արձանագրված ամսաթվերի) հիման վրա հնարավոր է դառնում որոշել Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման մոտավոր ժամանակը՝ 1056-1059 թվականներին»: Թվագրման այս անճշտություններից զատ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի բովանդակությունը ներկայացնում է ըստ իր «կազմած սխալ ցանկի» (տե՛ս ՍՄ, էջ 219-221)՝ Գևորգ Սկևռացու խմբագրությունը

<sup>71</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ն. Վարդանյան, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբ. XIV- XVII դդ.», էջ 152-164:

<sup>72</sup> Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ., «Ներածություն», էջ XXIII-XXV:

վերագրելով կանոնախմբեր, որոնք այնտեղ երբևէ չեն եղել (առավել մանրամասն տե՛ս վերևում, էջ 404-405):

Ինչևէ, ամփոփելով, ընդգծենք, որ գիտական բարեվարքության ակնհայտ խախտմամբ Ն. Միրզոյանն աղավաղել է «ՍՄ» արժեքավոր ժողովածուի հրատարակիչների նշած հիմնական նպատակը. «Ժողովածուի նպատակն է ինչպես հայ, այնպես (է)լ միջազգային հանրությանը հաղորդակից դարձնել հայ իրավական ու սահմանադրական մշակույթի ձևավորման ու զարգացման ողջ տարեգրությանը» (ՍՄ, էջ 4): Աղճատելով «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի առաջացման և հետագա զարգացման ողջ պատմությունը՝ Ն. Միրզոյանն իր անգրագետ գրագողությանը, թույլ չի տալիս ընթերցողին սույն ժողովածուի շրջանակներում հիմնարար և ամփոփ գիտելիքներ քաղել հայ իրավագիտության պատմության այս կարևոր շրջափուլի վերաբերյալ:

Մեր կարծիքով, եթե Ն. Վարդանյանի եզրահանգումները (որոնք այստեղ առանց որևէ հղման «յուրացված» են) այդքան բարդ և անընկալելի էին Ն. Միրզոյանի համար, ապա առավել շահեկան կլինեք, որ նա ներկայացնեք միայն նախորդ ուսումնասիրողների տեսակետները (չնայած, որոշ դեպքերում նկատելի է, որ հեղինակը նույնիսկ այդ տեսակետները լիովին չի ընկալել և հասկացել) և չփորձեք դրանք «համեմել» Ն. Վարդանյանի՝ շատ դեպքերում նախորդների տեսակետները հերքող բացահայտումներով կամ կարծիքներով:

Իհարկե, հասկանալի է, որ այս «աճաբարությունը» կատարվել է մեկ անազնիվ նպատակով, չհղել Ն. Վարդանյանի աշխատանքները, «սեփականացնել» նրա տեսակետները և գիտական լայն շրջանակներին ներկայացնել որպես սեփական բացահայտումներ: Սակայն, ինչպես արդեն տեսանք, սա «հեղինակին» չի հաջողվել, քանզի տարբեր ուսումնասիրողների տեսակետները գրագետ համադրելու, դրանք ճիշտ ներկայացնելու համար ևս տարրական գիտական հմտություններ են անհրաժեշտ, որոնք և չունի պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Նարինե Միրզոյանը:

Այսպիսով ակներև է, որ «ՍՄ» ժողովածուում պ.գ.թ., դոցենտ Ն. Միրզոյանի «հեղինակած» վերը քննարկված բաժինը կետ առ կետ համապատասխանում է գրագողության մասին «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ կետի բոլոր դրույթներին. «Ուրիշի ստեղծագործությունից մտֆեռ, հատվածներ ֆաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն» և սույն հոդվածի բովանդակության՝ ՀՀ ԲՈԿ կաշքում տեղադրված մեկնաբանությանը. «Ուրիշի ստեղծագործություն ասելով՝ հասկանում ենք յուրաքանչյուր հրապարակված և չհրապարակված նյութ՝ գրվոր (ձեռագիր, տպագիր կամ էլեկտրոնային/աուդիո) կամ բանավոր, վիզուալ (տեսանյութ, նկար, գրաֆիկ, աղ-

յուսակ և այլն) կամ վերբալ (ձայնագրություն) ձևաչափով, որում միանշանակորեն երևում են հեղինակային տվյալները և հրատարակման/հրապարակման ժամանակագրությունը:

Ուրիշի ստեղծագործության յուրացումը և/կամ առանց պատշան հղումների օգտագործումը համարվում է գրագողություն՝ անկախ սկզբնաղբյուրի հեղինակների և/կամ սեփականատերերի կողմից նյութի՝ որպես սեփական ներկայացնելուն տրված համաձայնությունից: Որպես մասնավոր դրսևորում կարող է դիտարկվել այլ հեղինակների կողմից գրված ստեղծագործությունները գնելը և որպես սեփական ներկայացնելը»<sup>73</sup>:

*Այսու՝ ապացուցված համարելով ն. Միրզոյանի իրականացրած ակնհայտ գրագողության փաստը, նշենք, որ այս հոդվածի նպատակը միայն մասնավոր մեկ դեպքի՝ ն. Միրզոյանի գրագողության, հակագիտական պահվածքի արձանագրումը և հանրայնացումը չէ: Իրականում ցանկանում ենք գիտական հանրության, ոլորտի պատասխանատուների, ինչու՞ չէ նաև նրանց, ովքեր գողանում են, և նրանց, ումից գողանում են (և ովքեր, սակայն, շարունակում են լռել), ուշադրությունը հրավիրել այս չափազանց կարևոր խնդրին: Յավոք, գրագողությունն այսօր չի սահմանափակվում այս եզակի դեպքով: Ու թեև համապատասխան օրենքը վաղուց արդեն հաստատված է, սակայն, կանխարգելող համակարգված միջոցների բացակայությամբ պայմանավորված, գրագողությունը լայնորեն տարածված է և փաստացի խոչընդոտում է գիտության իրական զարգացմանը: Քանզի, ավելի արագ և «արդյունավետ» է ուրիշների հետազոտությունների արդյունքները «յուրացնելը», «գրպանելը», քան ամիսներ, նույնիսկ տարիներ շարունակ նոր բացահայտումներ անելու համար անխոնջ աշխատելն ու պրպտելը:*

Հատկապես այսօր, երբ շատ է խոսվում գիտության ոլորտը բարեփոխելու մասին, կարևոր է արձանագրել, որ առանց գրագողությունը կանխարգելող գործուն միջոցների ներդրման, այդ բարեփոխումներից շատերը որևէ տեսանկյունի արդյունք չեն ապահովի: Եվ ինչպես որոշակի օրենքներով դատապարտվում է ուրիշի նյութական սեփականությունը յուրացնողն ու հափշտակողը, այնպես էլ պետք է հստակ պատժամիջոցներ (ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները թերևս լրամշակման կարիք ունեն) և դրանց կիրառման ճիշտ մեխանիզմներ մշակվեն մտավոր սեփականությունը գողացողների համար, քանի որ ցանկացած «յուրացված» միտք տվյալ հեղինակի սեփականությունն է, տքնաջան աշխատանքի արդյունքը: Կարծում ենք, որ ոլորտի բարեփոխումը գիտնականներից ակնկալվող, երբեմն նաև պարտադրվող ամենատարբեր պահանջներից բացի, ենթադրում է նաև նույն գիտնականների իրավունքների, այս դեպքում, մտավոր սեփականության հուսալի պաշտպանություն:

<sup>73</sup> <https://www.bok.am/node/11852>



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

### Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

### Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան ..... 22

### Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները  
հայ-մոնղոլական հարաբերություններում ..... 40

### Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ  
առևտրում ըստ Ժ.-Ժ.Գ. դարերի պարսկական և արաբական  
պատմաաշխարհագրական երկերի ..... 60

### Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

### Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի  
հրատարակման նախապատմությունը..... 83

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը ..... 93

### Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի  
գրավոր աղբյուրները..... 113

### Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցին և նրա  
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

## ԱՐՎԵՍ

### Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակներ  
հայկական մանրանկարներում..... 166

### Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

### Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի  
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

### Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը ..... 268

### Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների  
գործունեության մասին ..... 295

### Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական  
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և  
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրերի ձեռագիր գրառումների և գրադարանային  
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը ..... 321

### Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրերի ձեռագիր և  
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) ..... 330

**Հերմինէ Գրիգորեան**

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի ..... 350

**ԲԱՆԱՎԵՃ****Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում ..... 377

**ՀԱՂՈՐԴՈՒՄ****Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը ..... 420

**ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ****Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) ..... 432

*ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ*

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ..... 438

---

## CONTENTS

### HISTORY

#### **Azat Bozoyan**

The Role of Antioch in the Policy  
of Levon the Magnificent .....5

#### **Karen Matevosyan**

Anticatholicos Anania of the Sultanate of Rum .....22

#### **Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic  
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

#### **Elina Ghazaryan**

The Role of South Caucasian Towns  
in Transit Trade According to the Persian and Arabic  
Historico-Geographical Works of 10<sup>th</sup>-14<sup>th</sup> Centuries.....60

#### **Georgi Mirzabekyan**

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

#### **Haykaz Hovhannisyan**

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory  
of the Publication of the Journal “Northern Lights”.....83

### PHILOLOGY

#### **Davit Gevorgyan**

The Translational Movement Initiated by Grigor II Vkeyaser.....93

#### **Donara Karapetyan**

The Written Sources of Asar Sebastats‘i’s  
*Book of Medical Art*.....113

#### **Anna Ohanjanyan**

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs  
of Mush and his Book *Key of Truth*.....131

### ART

#### **Avet Avetisyan**

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*  
in Armenian Miniatures.....166

**Seda Manukyan**

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

**Anna Arevshatyan**

Observations on the melodic thinking in  
the monodies of the Liturgy in the arrangements  
by Makar Yekmalian and Komitas..... 212

**PUBLICATIONS****Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and  
His Newly Discovered Poems..... 233

**Lusine Tumanyan**

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘ ..... 268

**Hasmik Kirakosyan**

A Recently Discovered Document about the Activity  
of Evangelical Missionaries in Shushi..... 295

**Mihran Minassian**

A Previously Unpublished List of Diocesan Villages of the  
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,  
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries  
of Pasen and Takht (1861–1866)..... 305

**BIBLIOGRAPHY****Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of  
Handwritten Remarks and Library Notes in  
Armenian Early Printed Books..... 321

**Tatevik Manukyan, Knarik Sargsyan**

Handwritten and Library Notes of Early Printed Books  
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

**Hermine Grigoryan**

Catalogue of the Armenian Manuscripts of the  
Gulbenkian Museum in Lisbon..... 350

**DISCUSSION****Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

**REPORT****Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

**OBITUARY****Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

## СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

<b>Азат Бозоян</b>	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
<b>Карен Матевосян</b>	
Антикатоликос румского султаната Анания.....	22
<b>Гагик Даниелян</b>	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
<b>Элина Казарян</b>	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
<b>Георгий Мирзабекян</b>	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г. ....	74
<b>Айказ Оганесян</b>	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

## ФИЛОЛОГИЯ

<b>Давид Геворгян</b>	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
<b>Донара Карапетян</b>	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
<b>Анна Оганджян</b>	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

## ИСКУССТВО

<b>Авет Аветисян</b>	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
<b>Седа Манукян</b>	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
<b>Анна Аревшатян</b>	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

## ПУБЛИКАЦИИ

### **Ани Аракелян**

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

### **Лусине Туманян**

Гандзы и таги Ованеса Бргутенца ..... 268

### **Асмик Киракосян**

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши..... 295

### **Мигран Минасян**

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

## БИБЛИОГРАФИЯ

### **Геворг Тер-Варданян**

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах..... 321

### **Татевик Манукян, Кнарик Саргсян**

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

### **Эрмине Григорян**

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне..... 350

## ДИСКУССИЯ

### **Нарине Варданян**

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? ..... 377

## СООБЩЕНИЕ

### **Манеа Эрна Ширинян**

XXIV всемирный конгресс византинистов..... 420

## НЕКРОЛОГ

### **Назени Гарибян**

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432



**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 34**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 34**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 34**

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի քվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)